

Պրոլետարները ընդդ յերկիրներին, միացե՛ք

ՈՒՆՈՒԹՅՈՒՆ ԱԳԻՏԱՏՈՐԻՆ

ԽՍԵՆՈՒՍՀՐԱՑ ● 1936

30 JAN 2018

Handwritten mark

Պրոլետարներ բոլոր յերկիրների, միացե՛ք

ՈՒՆՈՒԹՅՈՒՆ ԱԳԻՏԱՏՈՐԻՆ

ԽՍՀՄ-ՍՏՂՐԱՑ ★ 1936 ★ ԵՆԵՎԱՆ

**ԱԳԻՏԱՏՈՐԻ ԽՆԳԻՐՆԵՐԸ
ԽՍՀՄ ՆՈՐ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԾԻ
ՀԱՄԱԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ**

Այժմ ամբողջ Խորհրդային Միութեան, ինչպես նաև ամբողջ աշխարհի ուշադրութիւնը սեւեռված է համաժողովրդական քննարկման համար հրատարակված նոր Սահմանադրութեան նախագծի վրա: Մեր յերկրի ժողովուրդների համերաշխ բազմազգ ընտանիքը մեծ խանդավառութեամբ քննարկում է հաղթանակած սոցիալիզմի ժամանակաշրջանի այս ամենապայծառ վավերագիրը, հսկայական, համաշխարհային պատմական նշանակութիւն ունեցող վավերագիրը, վոր մշակված է ժողովուրդների սիրելի, հարազատ, իմաստուն առաջնորդ ընկեր Ստալինի անմիջական ղեկավարութեամբ:

Մեր սոցիալիստական հայրենիքի պետական կառուցվածքի հիմնական որոնքի համաժողովրդական քննարկումը մեծագույն կարևորութիւն ունեցող դործ է: Այն ամենամերձավոր կերպով վերաբերում է մեր յերկրի բոլոր քաղաքացիներին: Այն նրանց հարազատ դործն է:

Այստեղից բոլշևիկյան ազխատորների առջև ծառանում է մի պատվավոր, պատասխանատու խնդիր — ժողովրդական ամենալայն մասսաներին մանրամասն ծանոթացնել Սահմանադրութեան նախագծին, այս նախադիժը բառացի հասցնել ամեն մի աշխատավորի, անպայման կարգալ ունկնդիրներին (յեթե հարկ լինի՝ յերկու, յերեք անգամ) նախագծի պմեն մի հողվածը և խելացի բացատրել այն, հմտորեն պատասխանել ընթերցման ժամանակ ծագող բոլոր հարցերին: Խորհրդային իրականութիւնից և կապիտալիստական յերկիրների կյանքից վերցրած կոնկրետ, պարզ օրինակներով, անցյալն ու ներկան առդրելով՝ ցույց տալ հաղթանակած սոցիալիզմի ստալինյան Սահմանադրութեան ամբողջ մեծ իմաստն ու նշանակութիւնը:

Հարկավոր է զգաստաբար ունկնդրել նախագծի քննարկման ընթացքում առաջադրվող բոլոր առաջարկներին ու դիտողու-

11-282029
В ПОМОЩЬ АГИТАТОРУ

թյուններին, գրանցել դրանք և հանձնել լրագրերին, կուսակցական, խորհրդային և հասարակական կազմակերպություններին, վորպեսզի յուրաքանչյուր գործնական դիտողություն ու առաջարկ հետո կարելի լինի հաշվի առնել:

Նախագծի հրատարակման առաջին իսկ որերին բոլոր ձեռնարկություններում, կորսնտեսություններում և այլն գումարվեցին մասսայական ժողովներ, կատարվեցին բարձրագույն ընթերցումներ ու զրույցներ տասնյակ միլիոնավոր աշխատավորներին ակտիվ մասնակցությամբ: Սակայն դեռևս կան շատ ու շատ աշխատավորներ և նրանց ընտանիքներ, վորոնք այս կամ այն պատճառով չեն ընդգրկված այս աշխատանքի մեջ: Բացի սրանից Սահմանադրության քննարկմանը նվիրված ժողովներին ու զրույցներին մասնակցածները բոլորը չե, վոր բավականաչափ յուրացրել են այս վավերագրի ամբողջ նշանակությունը, բավականաչափ ծանոթացել նրա յուրաքանչյուր հոդվածին: Նրանցից շատերն առաջին ընթերցման ժամանակ չեն հասկացել այս կամ այն հոդվածը, նրանց մեջ առաջանում են դանազան տարակուսելի հարցեր, վորոնց համար նրանք ուզում են պարզ, խելացի պատասխան ստանալ: Ազիտատորի խնդիրն է՝ նախագծի բարձրաձայն ընթերցանություն ընդգրկել անխտիր բոլոր աշխատավորներին, յեթե հարկավոր է՝ ապա դարձյալ կարողալ այս կամ այն հոդվածը, Սահմանադրության ընթերցումը կատարել այնպես, վոր բառացի նրա յուրաքանչյուր տողի բովանդակությունը խորապես մեխի ունկնդիրների գիտակցության մեջ, կազմակերպել ընթերցանություն և պարզաբանություն նաև աշխատավորների բնակարաններում, նրանց ընտանեկան միջավայրում: Հարկավոր է ձգտել, վոր յուրաքանչյուր աշխատավոր յուրացնի նոր Սահմանադրության վոչ միայն ընդհանուր վորդին, ընդհանուր ուղղությունը, այլև լավ խմանա նրա յուրաքանչյուր հոդվածը: Այս է հիմնական խնդիրը:

Ազիտատորը լավ պետք է յուրացնի, վոր նոր Սահմանադրության նախագծի բարձրաձայն ընթերցումների և նրանց գուշորող պարզաբանման աշխատանքի որինակելի կազմակերպումը ամենաանհրաժեշտ պայմանն է, միջոցը մեր մեծ եպիսոպոսի այս կարևորագույն վավերագրի իսկական համաժողովրդական բնարկման համար:

Նոր Սահմանադրության նախագիծն ըստ եյության շոշափում է մեր յերկրում սոցիալիզմի հաղթանակի և մեր ամենորյա կյանքի հետ կապված բոլոր հարցերը: Սահմանադրության նախագիծն ունի նաև միջազգային հարայական նշանակություն. նա անմիջականորեն ազդում է համայն աշխարհի մարդկության հակառակը վրա:

Կապիտալիստական յերկիրների ամեն մի աշխատավոր իՍՄՄ նոր Սահմանադրության մեջ կտեսնի այն ծրագրերը, վորի համար նա պետք է պայքարի իր ազատագրման համար, և այն, ինչ արդեն նվաճել են իՍՄՄ աշխատավորները:

ԱԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ Ե ԱՅՆ,
ԻՆՉ ԱՐԳԵՆ ՆՎԱՃՎԱԾ Ե ՅԵՎ ԱՄՐԱՑՎԱԾ

Առաջինն ու հիմնականը, վոր իր պարզաբանման աշխատանքում պետք է ընդգծի ազիտատորը, այդ այն է, ինչ գրանցված է Սահմանադրության մեջ, այն հասարակական կառուցվածքը, մեր յերկրի սոցիալ-տնտեսական այն կերպարանքը, վոր մենք ունենք այստեղ:

Սոցիալիստական սեփականության լիակատար գերելյանություն: Բոլոր շահագործող դասակարգերի վերացում: Ազգատություն ու գործազրկության վոչնչացում: Աշխատավորների նյութական և կուլտուրական մակարդակի անչեղ վերելք: Յերկրի անկախության և պաշտպանունակության ամրացում: Մի խոսքով՝ այն ամենը, ինչի մասին խոսվում է Սահմանադրության առաջին դիտում, այս բոլորը բնավ չի հանդիսանում մեր ձգտումների գեկլարացիա, այլ արդեն նվաճված ու ամրացված է յերկրի բանվոր դասակարգի և բոլոր աշխատավորների ձեռքով կոմունիստական կուսակցության գեկավարությամբ մեծ Ստալինի գլխավորությամբ:

Ճիշտ այսպես ել արդեն նվաճված ու ամրացված է այն ամենը, ինչ գրանցված է Սահմանադրության տասերորդ դիտում՝ բարաբարցիների հիմնական իրավունքների ու պարտականությունների վերաբերյալ: Աշխատանքի իրավունքը, յերաշխավորված աշխատանք ստանալու իրավունքը քանակի և վորակի համար պատասխան աշխատավարձով՝ հանդիսանում է վոչ թե ձգտում,

վոչ թե խոստում, վոչ թե ապագայի դործ, այլ ներկայի դործ, այսօրվա մեր կեցութեան փաստ: Ճիշտ այսպես ե գրութեանը նաև աշխատավորների իրավունքի վերաբերմամբ՝ հանդուստնալու, նյութապես ապահովելու ծերութեան կամ հիվանդութեան ու աշխատունակութեանը կորցնելու դեպքում, կրթութեան ստանալու (մինչև բարձրագույն) իրավունքի, խոսքի, մամուլի, ժողովների ազատութեանն ապահովելու վերաբերմամբ և այլն: Այս ամենը վերցված ե մեր, խորհրդային իրականութեանից և գրանցված նոր Սահմանադրութեան նախագծում, մեր յերկրի հիմնական որոնքի մեջ: Այսպես ե գրութեանը նոր Սահմանադրութեան մի շարք ուրիշ գլուխների և հոդվածների վերաբերմամբ:

ՀԻՇԵՑՆԵԼ ԱՆՅՅԱԼ ՈՒՂԻՆ,
ՀԱՄԵՄԱՏՆԵԼ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՀԵՏ

Անցյալի հետ համեմատելով կարելի յե ասելի լավ ըմբռնել ու ասելի լրիվ գնահատել Սահմանադրութեան նոր նախագծի ամբողջ մեծ իմաստը: Ուստի, պատմելով նոր Սահմանադրութեան մասին, ազիտատորը պետք ե բնութագրի պատմական այն միջավայրը, վորի մեջ ծնունդ են առել 1918 և 1924 թվականների Սահմանադրութեանները: Նա պետք ե հիշեցնի, թե ինչպես Պրոլետարական մեծ հեղափոխութեան ու քաղաքացիական պատերազմի հրի ու փոթորկի մեջ ծնունդ առավ խորհրդային առաջին Սահմանադրութեանը: Նա պետք ե պարզաբանի, վոր այս Սահմանադրութեանը համապատասխանում եր այն փուլի քաղաքական դրութեանն ու դասակարգային ուժերի հարաբերակցութեանը: Այս պատճառով նախկին Սահմանադրութեամբ շահադործողները զրկված եյին ընտրական իրավունքից: Այս պատճառով բանվոր դասակարգը, իբրև ամենից առաջավոր և հեղափոխական դասակարգ, իբրև ամենից ասիլի նվիրված սոցիալիզմի պայքարին՝ վորոշ առավելութեաններ ունեւր գյուղացիութեան հանդեպ (ներկայացուցչական նորմայի տեսակետից):

Այս կապակցութեամբ հարկավոր ե պարզաբանել, վոր արդեն այն ժամանակ կուսակցութեանն ու խորհրդային իշխոսնութեանը գտնում եյին, վոր բանվորների և գյուղացիների միջև

յեղած վորոշ անհավասարութեանը պետք ե կրի սուկ ժախնակավոր բնույթ, վոր սոցիալիզմի հաղթանակների հետ յուզընթաց պետք ե անհետանա այս անհավասարութեանը:

Հենց այստեղ հարկավոր ե ընդգծել, վոր հին Սահմանադրութեամբ մեզ մտա ընտրական իրավունքից ոգտվում եր բնակչութեան ճնշող մեծամասնութեանը, վոր մեր Սահմանադրութեանն ըստ եյութեան ամենայայն եր, ամենալրիվն աշխարհի բոլոր սահմանադրութեաններից:

Համեմատութեան համար ազիտատորը պետք ե մանրամասն կանդ առնի այն բանի վրա, թե ինչ են ներկայացնում իրենցից բուրժուական յերկիրներ Սահմանադրութեանները, բաց անի նրանց կեղծութեանը, խաբեյութեանը, պարզաբանի, վոր նրանք լստ եյութեան նպատակ ունեն սահմանափակել շահագործվող մեծամասնութեան շահերը, պաշտպանել արտադրութեան միջոցների ու դործիքների մասնավոր սեփականութեանը, վոր հանդիսանում ե կապիտալիզմի միջուկը, միլիոնավոր աշխատավոր մասսաների կեղեքման միջոցը:

Առանձնապես հարկավոր ե կանգ առնել ներկայիս դրութեան վրա, սոցիալիզմի հաղթանակներն ու խորհրդային դեմոկրատիզմի մինչև վերջ զարգացումը հակադրելով կապիտալիստական աշխարհի դրութեանը, մասնավորապես զաղանարար Փաշիզմի՝ խոշոր կապիտալի այս բացահայտ արյունոտ դիկտատուրայի, յերկիրների դրութեանը:

ՍՏԱԼԻՆԸ՝ ՀԱՂԹԱՆԱԿԱԾ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ
ՄԵԾ ԽԱՐՏԻԱՅԻ ՆԱԽԱԶԵՌՆՈՂ ՅԵՎ ԿԵՐՏՈՂ

Հարկավոր ե պատմել ընկ. Ստալինի հակայական դերը թե՛ նախկին Սահմանադրութեանը և թե՛ նոր նախագիծն ստեղծելու գործում: 1918 թվին Ստալինը կանգնած եր խորհրդային առաջին Սահմանադրութեան որորոցի մոտ: Նրա անմիջական ղեկավարութեամբ ե մշակվել նաև միութենական Սահմանադրութեանը 1924 թվին: Նա իբրև ղեկուցող հանդես ե յեկել կուսակցութեան և խորհուրդների համագումարներում ազգային հարցի և միութենական սահմանադրութեան վերաբերյալ:

Այժմ, ԽՍՀՄ պատմական զարգացման նոր փուլում, ընկեր Ստալինը հանդիսացավ նոր Սահմանադրութեան նախաձեռնողն ու ստեղծողը: Նրա նախաձեռնութեամբ այս հարցը 1935 թվի հունվարին դրվեց խորհուրդների համամիութենական VII համագումարում: Նրա անմիջական ղեկավարութեամբ մշակվեց նոր Սահմանադրութեան նախագիծը: Այս հարցի առթիվ նա հանդես յեկավ նաև իբրև գեկուցող ՀամԿ(բ)Կ Կենտկոմի վերջին պլենումում: Նրա ղեկավարութեամբ կուսակցութունը՝ բանվոր դասակարգի և բոլոր աշխատավորների զուլխ անցած՝ ինդուստրացրեց յերկիրը և կոլեկտիվացրեց գյուղատնտեսութունը, իրականացրեց նոր Սահմանադրութեան մեջ գրանցված՝ սոցիալիզմի մեծ հաղթանակները և այժմ ուրախ, հարուստ կյանք և կառուցում բոլոր աշխատավորների համար:

Յեվ իզուր չէ, վոր նոր Սահմանադրութունն իրենց իսկ մասսաների բերանով ստացավ հաղթանակած սոցիալիզմի ստալինյան Սահմանադրութունն անունը: Այս Սահմանադրութեան մեջ արտահայտվում է նրա իմաստուն կերտող ընկեր Ստալինի հանճարը:

ՄԵԾ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ԻՐԵՆՑ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՊԱՀՈՎՎԱԾ ԵՆ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԲԱԶԱՅՈՎ

ԽՍՀՄ քաղաքացիների հիմնական իրավունքներն ու պարտականութունները շնորհապարտ թեմա յեն ազդեցությունների համար: Այստեղ նախազգծի ամեն մի տողը (տես X գլուխ) համեմատութեան է ձգտում կապիտալիստական աշխարհի հետ, ցուցաբերելով նրա ամբողջ նողկալիութունն ու նեխածութունը, դիպուկ հարվածելով ճիշտ նպատակին: Աշխատելու իրավունք, աշխատանքը յերաշխավորելու իրավունք՝ նրա քանակին ու վորակին համապատասխան աշխատավարձով, հանգստանալու իրավունք, ծերութեան ժամանակ, հիվանդութեան և աշխատունակութունը կորցնելու դեպքում նյութապես ապահովվելու իրավունք, կրթութեան իրավունք (ներառած բարձրագույնը) — մի թե վորեք նման բան հնարավոր է կապիտալիզմի ժամանակ:

Այնտեղ անկարելի չէ նույնիսկ այսպիսի իրավունքների վե-

րաբերյալ հարցադրումը: Այնտեղ այս բոլորը հնչում է իբրև անիրականանալի յերազ, իբրև ուտոպիա: Այնտեղ բազմաձև լիտն մարդկանց գործադրելութունը, սովն ու աղքատութունն են թաղապորում աշխատավոր մասսաների մեջ:

Իսկ մեզ մոտ՝ սա ինքը կյանքն է, այն, ինչ կա, ինչ ապահովված է ժողովրդական տնտեսության սոցիալիստական կազմակերպությամբ և բուռն կերպով անող անհրաժեշտ նյութական հիմքով: «Կյանքն ավելի լավ է դարձել, ընկերներ՝ Կյանքն ավելի ուրախ է դարձել»: Ստալինյան Փորձության պայծառ կերպով արտահայտում է սոցիալիզմի այս հաղթանակները: Յեվ ստալինյան ժողովրդական հզոր շարժումը տանում է գեպի ե՛լ ավելի մեծ հաղթանակներ՝ աշխատանքի արտադրողականութեան աճման, այս նյութական պայմաններն ապահովելու գործում:

Համամիութենական և տեղական մի շարք թվերով ու փաստերով ազդեցությունը պետք է գծի Սահմանադրութեան մեջ գրանցված իրավունքների իրականացման համար նյութական պայմանների բուռն աճման՝ վառ պատկերը:

Նույնքան վառ համեմատութուններ կարելի չէ բերել նաև Սահմանադրութեան՝ կանանց իրավահավասարութեան վերաբերյալ հոգվածի կապակցութեամբ: Այնտեղ, կապիտալիստական աշխարհում, կանայք ընտրական իրավունքներից զրկված են նույնիսկ մի շարք այսպես կոչված գեմտկրատական յերկիրներում (որինչու, Ֆրանսիայում), կանայք զանվում են կենցաղային և տնտեսական ստրկութեան մեջ և այլն: Առանձնապես կոշտ առաջին է կանանց դրութունը Ֆաշիստական Գերմանիայում: Իսկ մեզ մոտ՝ ավելի և կանանց լիակատար իրավահավասարութունը վո՛չ միայն քաղաքական, վո՛չ միայն բարոյական ապահովումը, այլև ստեղծված են սրա համար անհրաժեշտ բոլոր նյութական կենցաղային պայմանները (կանանց ներգրավումն արտադրութեան մեջ, յերեխաների ստալինյան հոգատարութունը, արտոնների արգելման, մայրերին ցույց տրվող ոգնութունը մեծացնելու, մտուրների ցանցն ընդարձակելու և այլնի վերաբերյալ որենքը):

Նոր Սահմանադրութեան մեջ հզոր պայծառութեամբ ու պարզորոշութեամբ է ձևակերպված ԽՍՀՄ քաղաքացիների՝ անկախ նրանց ազգությունից ու ցեղից՝ լիակատար իրավահավասարու-

թյան վերաբերյալ կետը: Մեր յերկրի համար սա անխախտ
արեւի է, և նրա թեկուզ անուղղակի խախտման մեջ մեղավոր-
ները խիստ պատժվում են: Մի՞թե վորեւե նման բան կա կապի-
տալիստական աշխարհում: Այնտեղ նույնիսկ հռչակված դեմո-
կրատական յերկիրներում, ինչպես Ամերիկան է, մյուս ցեղերը
միայն թղթի վրա յեն ոգտվում իրավահասարակութունից:
Ազիտատորը պետք է պատմի ԱՄՆ Լինչի դատաստանների մա-
սին, գաղութային բազմամիլիոն ժողովուրդների իրավազուրկ
դրության մասին: Առանձնապես մանրամասն պետք է կանգ
առնել Ֆարչիստական Գերմանիայում տիրող դրության վրա,
վորտեղ ազգային փոքրամասնութունների իրավազուրկութունը
հրեշտիւր չափեր է ընդունել, վորտեղ հրեաներին և ուրիշ «վոչ-
արիական» ազգութուններին ծաղրանքի յենթարկելը գերազան-
ցում է միջնադարի ամենամոռայ սարսափները: Ազգային հան-
րապետութունների, մարդերի ու շրջանների ազիտատորները
պետք է առանձին վառ ազիտացիա ծավալեն Սահմանադրության
այս հոդվածի շուրջը, առադրելով անցյալի ու ներկայի փաս-
տերը, մերկացնելով տեղական նացիոնալիզմի մեծապետական
չովինիզմի դեռևս չվերացված մնացորդները:

Նոր Սահմանադրության 125-րդ հոդվածում խոսվում է
ԽՍՀՄ բոլոր քաղաքացիներին խոսքի, մամուլի, ժողովների,
փողոցային յերթերի և այլ ազատութուն յերաշխալորելու մա-
սին: Այստեղ ազիտատորը պետք է նշի, վոր բուրժուական
սահմանադրութունները մեջ ել հիշատակվում է նման ազատու-
թունների մասին: Սակայն այդ սահմանադրութուններին կրց-
ված վերապահութուններում այս բոլոր ազատութունները հա-
վասարեցվում են զրոյի, և կրիտիկական մոմենտին բուրժուա-
կան կառավարութունն առանց քաշվելու խախտում է դրանք:
Իգուր չե, վոր դեռևս Մարքսն այս մասին գրել է, թե բուր-
ժուական սահմանադրութուններն իրենց մեջ պարունակում են
իրենց սեփական հակադրութունը. «Ազատութուն—ընդհանուր
խոսքի մեջ, ազատության վերացում—վերապահության մեջ»:
Իեստ ապիլին՝ նույնիսկ այն ժամանակ, յերբ բուրժուազիան
կարծես թե չի խախտում այս ազատութունները, ապա, իր ձեռ-
քում ունենալով դրանց իրականացման համար անհրաժեշտ նյու-
թական բազան (տարբաններ, թուղթ, հասարակական շենքեր
և այլն), նա չափազանց սահմանափակում է այս ազատութուն-

ներից տղտվելու հնարավորութունը պրոլետարիատի համար,
իրև չունեւոր դասակարգի:

Վ. ի. Լենինն այս առթիվ գրել է.

«Մամուլի ազատութունն ամբողջ աշխարհում, վորտեղ կան
կապիտալիստներ՝ լրագրեր գնելու, գրողներին գնելու, կաշա-
ռելու, հասարակական կարծիքը հոգուտ բուրժուազիայի գնելու
և հորինելու ազատութուն է»:

Ազիտատորն այս գրությանը պետք է հակադրի մեր յեր-
կիրը, վորտեղ այս ազատութուններն իրականում ապահովվում
են՝ աշխատավորներին և նրանց կազմակերպութուններին
տրամադրելով բոլոր տեխնիկական և նյութական պայման-
ները, վոր անհրաժեշտ են դրանց իրականացման համար: Հին
պարսպներն ու թատրոնները, խորհրդային շրջանում կառուց-
ված շքեղ ակումբներն ու մնացած բոլոր շենքերը, վոր հար-
մար են ժողովներ կազացնելու համար, թուղթն ու տպարանը,
խորհրդային քաղաքների ու գյուղերի հրապարակներն ու փո-
ղոցները գրված են աշխատավորների տրամադրության տակ:
Դրութունը նույնն է նաև աշխատավորներին հասարակական
կազմակերպութունների մեջ միավորվելու իրավունքի վերա-
բերմամբ:

ԱՄՔՈՂՋ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՏԿԱՆՈՒՄ Ե ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻՆ

Նոր Սահմանադրության նախադրի մեջ գրանցված է,
վոր Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութունների
Միութունը բանվորների և գյուղացիների սոցիալիստական պե-
տութունն է: Նրա քաղաքական հիմքն են կազմում «Աշխա-
տավորների Պատգամավորների Խորհուրդները»: Ազիտատորն
ոմնկնդիրների հատուկ ուշադրութունը պետք է դարձնի այս
նոր անվան վրա, վոր մտցվում է հին—«Բանվորների, գյուղացի-
ների և կարմիր—բանակայինների պատգամավորների խորհուրդ-
ների» փոխարեն: Այստեղ կրկին իր ցայտուն արտահայտութունն
է դասել այն, ինչ արդեն նվաճված է, ամբացված. խոք-
հրդային յերկիրն ամբողջովին դարձել է աշխատավորների
յերկիր: Շահագործող դասակարգերը վերացված են: Չնչվում

են աշխատավոր դասակարգերն միջև յեղած սահմանները: Գյուղացիութիւնը դարձել է կոյտնտեսային գյուղացիութիւն. խիստ փոփոխվել է ինտելիգենցիան. առաջացել են նոր, խորհրդային ինտելիգենցիայի հսկայական խավեր՝ յեղած բանվոր դասակարգի և աշխատավոր գյուղացիութեան շարքերից. հին ինտելիգենցիայի ճնշող մեծամասնութիւնը համընթաց է գնում բանվոր դասակարգի հետ, ինտելիգենցիան իր ամբողջութեամբ դարձել է ժողովրդական, աշխատավորական: Հենց այս պատճառով է, վոր մենք այժմ կունենանք աշխատավորների պատգամավորների խորհուրդներ, մի բան, վորն ընդգծում է ինտելիգենցիայի իրավահասարակ տեղը սոցիալիզմ կառուցողների մեծ ընտանիքում:

Նոր Սահմանադրութեան նախագծով ընտրական իրավունքից ոգտվում են բոլոր քաղաքացիները, սկսած 18 տարեկան հասակից: Միայն դատարանով իրավունքների սահմանափակում ստացողներն ու խեղադարներն ընտրական իրավունք չունեն: Մնացած բոլորն ոգտվում են թե ակտիվ (ընտրելու իրավունք) և թե պասսիվ (ընտրվելու իրավունք) իրավունքներով: Այսպես է իրականանում մեր յերկրում իսկական համաժողովրդական ղեկավարտիան:

Ագիտատորը սրան պետք է հակադրի կապիտալիստական յերկիրների գրութիւնը, պատմի մի ամբողջ շարք սահմանափակումների մասին, վոր կատարվում են գուլքային, հասակային, կրթական և այլ այսպես կոչված ցենզերի միջոցով: Պատմել, վոր նույնիսկ այնպիսի ղեկավարտական յերկրում, վորպիսին Յրանսիան է, բնակչութեան կեսը—կանայք—գուրկ են ընտրական իրավունքներից: Չնայած այս բոլոր սահմանափակումներին, բուրժուական սահմանադրութիւնները կեղծաբար հռչակում են «ընդհանուր» ընտրական իրավունք: Հարկավոր է պատմել այն սարսափի մասին, վոր այժմ տիրում է Ֆաչիստական յերկիրներում, վորտեղ բուրժուական նույնիսկ պոչատ, կրճատ, կեղծ սահմանադրութիւններն այժմ գրոյի յեն հավասարեցված և վորտեղ թագավորում է Ֆաչիստական բացահայտ, զազանաբարո գիկտատուրան, մոնոպոլիստական կապիտալի գիկտատուրան:

Ագիտատորը մանրամասն պետք է պարզաբանի, թե հատ-

կատես ի՞նչ է ներկայացնում իրենից մեզ մոտ մտցվող ուղղակի և հավասար ընտրական իրավունքը, պատմի դադտնի քվեարկութեան նշանակութեան մասին: Սրա պայծառ ընտրչումը տվել է ընկեր Ստալինը պէն Ռոյ Հոուարդի հետ գրուցելիս. «ընդհանուր, հավասար, ուղղակի ու դադտնի ընտրութիւնները իՍՂՄ-ում մի խարաղան կհանդիսանան ազգաբնակչութեան ձեռքում՝ իշխանութեան վատ աշխատող որդանների դեմ»: Նրանք խարաղանկ կլինեն բյուրոկրատիզմի հակամետ խորհրդային աշխատողների դեմ, բոլոր հիմնարկներում ու կազմակերպութիւններում աշխատանքը բարելավելու հզոր գործիք:

ՊԱՐԶԱԲԱՆԵԼ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ,
ԿԵՆՏՐՈՆՆԵՐՈՒՄ ՈՒ ՏԵՂԵՐՈՒՄ
ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՍՏՐՈՒԿՏՈՒՐԱՅԻ ԱՄԵՆ ՄԻ ԿԵՏԸ

Ագիտատորը պետք է մանրամասն պարզաբանութիւն տա թե՛ իՍՂՄ պետական կառուցվածքի և թե՛ իշխանութեան բարձրագույն որդանների մասին: Յուրաքանչյուր աշխատավորի պարզ հասկանալի պետք է լինի, թե ի՞նչպես է մեզ մոտ գուգորդում ու սահմանադատվում որենադրական ու կատարողական իշխանութիւնը, ինչու՞ն է արտահայտվում խորհրդային յերկպալատ փրտեմը, ի՞նչպես է կազմվում խորհրդային կառավարութիւնը, ինչ փոխհարաբութիւններ տւ Ֆունկցիաների սահմանադատում կա զանազան որդանների միջև և այլն: Մանրամասն պետք է պատմել իշխանութեան կազմակերպման մասին դաշնակից հանրապետութիւններում, ինքնավար հանրապետութիւններում, յերկիրներում, մարզերում ու տեղերում, ի՞նչ որդան վորքան ժամանակով է ընտրվում, նրա ընտրութեան կարգը և այլն:

Առանձնապես պետք է կանոգ առնել դատական իշխանութեան կազմակերպման վրա, ընդգծելով այս որդանների ընտրականութեան հսկայական դերն ու նշանակութիւնը: Գերագույն դատարանն ընտրվում է գերագույն խորհրդի կողմից, իսկ ժողովրդական դատավորներին անմիջականորեն ընտրում են տվյալ շրջանի քաղաքացիներն ընդհանուր, ուղղակի և հավասար ընտրական իրավունքի հիման վրա՝ դադտնի քվեարկութեամբ:

ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՈՒԳՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ
ԳԵՐԱԳՈՒՅՆ ՈՐԳԱՆՆ Ե

Ազիտատորը պետք է խելացիորեն պարզաբանի և ստանձնապես ընդգծի, վոր բոլոր խորհուրդների պատգամավորների ընտրութիւնը՝ սկսած Գերագույն խորհուրդից, ընտրողները կատարում են ընդհանուր, հավասար և ուղղակի ընտրական խելացի հիման վրա՝ դադանի քվեարկութեամբ: Այսպիսով, բոլոր աշխատավորներն անմիջականորեն ընտրում են իրենց սոցիալիստական պետութեան գերագույն իշխանութիւնը:

Նմանապես պետք է ընդգծել, վոր որենազրական իշխանութիւնն իրականացնում են բացառապես Գերագույն խորհուրդները (ԽՍՀՄ-ի, դաշնակից և ինքնավար հանրապետութիւնների), վոր Գերագույն խորհուրդի Պրեզիդիումի նախագահը նրա նստաշրջանների նախագահը չէ, այլ յուրաքանչյուր պալատ (Միութեան խորհուրդ և Ազգութիւնների խորհուրդ) ընտրում է իր նախագահին և յերկու պալատների համատեղ նիստերը հերթով վարում են Միութեան խորհուրդի և Ազգութիւնների խորհուրդի նախագահները:

Մեծ ուշադրութիւն պետք է դարձնել նաև Գերագույն խորհուրդի պատգամավորների ամենալայն իրավունքների և մասնաշրջանի 71-րդ հոդվածում գրվածի վրա. «ԽՍՀՄ-ի կառավարութիւնը կամ ԽՍՀՄ-ի այն ժողովրդական կոմիսարը, վորին ուղղված է ԽՍՀՄ-ի Գերագույն խորհուրդի պատգամավորի հարցապնդումը, պարտավոր են ամենաուշը յերեք օրվա ընթացքում բանավոր կամ գրավոր պատասխան տալ համապատասխան պալատում»:

ԺՈՂՈՎՈՒԳՆԵՐԻ ՄԵԾ ԲԱՐԵՎԱՄՈՒԹՅՈՒՆԸ

Մեծ ուշադրութիւն պետք է հատկացնել ԽՍՀՄ-ի ժողովուրդների անխախտ բարեկամութեան, նրանց յեղբայրական միութեան, նրանց տնտեսական հզորութեան աճման և ձևով ազդային, բովանդակութեամբ սոցիալիստական կուլտուրաների բուն ծաղկման հարցին: Հարկավոր է պարզաբանել, վոր այս բոլորը կարող է յին ապահովել միայն խորհրդային հասարակա-

կարգն ու նրա Սահմանադրութիւնը, միայն լենինյան-ստալինյան ազգային իմաստուն քաղաքականութիւնը: Հենց սրա անչեղ կիրառման հիման վրա, սոցիալիզմի մեծ հաղթանակների յթացքում առաջներում հետամնաց ժողովուրդները (առանձնապես արեւելքում և հյուսիսում) կարողացան մասնակցել սոցիալիզմի ընդհանուր միութեան կառուցման, մեջ տալով զարգացման կապիտալիստական ծանր ուղին: Նոր Սահմանադրութիւնն իր մի շարք կետերով արտացոլում է մեր կուսակցութեան և նրա մեծ առաջնորդ ընկեր Ստալինի արեւմտ (հաղթանակը): Այսպես, նախկին յոթ դաշնակից հանրապետութիւնների փոխարեն այժմ կլինի տասնմեկ՝ դրանց թվի մեջ մտցնելով Վրաստանը, Աբխազիանը, Հայաստանը, Կազախստանը և Կիրգիզիստանը հանրապետութիւնը: Սոցիալիզմի հաղթանակներն արմատապես փոփոխել են նրանց դեմքը. նրանցում ստեղծված է հզոր ինդուստրիա, հաղթանակել է կոլտնտեսային կարգը, փարթամ ծաղկել է կուլտուրան, և այս առնչութեամբ անչափելի ընդարձակվել ու ամրացել են անմիջական կապերը (ներֆեդերատիվ կապերից զատ) միութեան մյուս հանրապետութիւնների ու շրջանների հետ:

Ազիտատորի խնդիրն է նաև հետագայում բոլոր աշխատավորներին մանրամասն ծանոթացնել Միութեան մեջ մտնող հանրապետութիւնների տնտեսութեանը և կուլտուրային, ոգովելով «Правда»-ի, «Спутник агитатора»-ի և այլ թերթերի ու ժուռնալների նյութերից: Հարկավոր է հիշել, վոր սերել իր յերկիրը՝ նշանակում է ճանաչել նրան:

Այստեղ դարձյալ ազիտատորը պետք է ընդգծի, վոր կապիտալիստական աշխարհում նման փաստերն ուղղակի անկարելի են: Իմպերիալիստական յերկիրները վոչ միայն հոգ չեն տանում իրենց ստրկացրած հետամնաց յերկիրների, դադութների ու կուսազդութների տնտեսական ու կուլտուրական ծաղկման մասին, այլև, ընդհակառակը, ամեն կերպ կասեցնում են նրանց զարգացումը, ստրկացնում են զաղանային, անդուսպ շահագործման նպատակով: Յեկ այս յերկիրների պետական կառուցվածքի մեջ կապիտալիստական աշխարհն իր իսկ բնութեամբ ամեն տեսակ փոփոխութիւններն անընդունակ է կատարելու խաղաղ հասարակարհով, և կատարում է հրով ու սրով:

Այս բոլոր մոմենտների պարզաբանման համար առանձնապես մեծ պահանջներ են առաջադրվում ազգային հանրապետութիւնների, մարզերի ու շրջանների ազխատորներին: Նրանք պետք է հաշվի առնեն տեղական առանձնահատկութիւնները, զինվե՛ն տեղական նյութերով և այս բոլորի հիման վրա պարզաբանեն մասսաներին ազգային հանրապետութիւնների, ինքնավար մարզերի և այլոց վերաբերյալ նոր Սահմանադրութեան նախագծում դրանցվածի ամբողջ մեծ նշանակութիւնը:

**ՀԱՅՐԵՆԻՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ԽՍՀՄ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՔԱՂԱՔԱՅՈՒՍՐԲԱԶԱՆ ՊԱՐՏՔՆ Ե**

Ազխատորը մեծ աշխատանք պիտի կատարի նաև խորհրդային քաղաքացիների պարտականութիւնների հարցում: Նոր Սահմանադրութիւնը մեծ իրավունքներ, ուրախ, հարուստ, կուլտուրական, իսկական ստեղծարար կյանք է արտահայտում բոլոր աշխատավորների համար: Բայց այդ իրավունքներն որդաճապես կապված են պարտականութիւնների հետ, այն է՝ ազնվո՛ւն աշխատել, սոցիալիստականորեն վերաբերվել աշխատանքին, կատարել խորհրդային որենքները, ազնվորեն վերաբերվել հասարակական պարտականութեան, հարգել սոցիալիստական համակեցութեան կանոնները, աչքի լույսի պես խնայել ու ամրացնել հանրային, սոցիալիստական սեփականութիւնը, վոր հանդիսանում է խորհրդային կարգերի սրբազան ու անձեռնմխելի հիմքը, հայրենիքի հարստութեան ու հզորութեան աղբյուրը, բոլոր աշխատավորների ունևոր և կուլտուրական կյանքի աղբյուրը: Յե՛վ վերջապես, կատարել պատվավոր պարտականութիւն—զինվորական ծառայութիւնը մեր հարագատ Կարմիր բանակում—և պատրաստ լինել ամեն մոմենտի մինչև արյան վերջին կաթիլը կատարելու սրբազան պարտքը՝ սոցիալիստական հայրենիքի, բոլոր աշխատավորների յերջանկութեան և ուրախութեան հայրենիքի պաշտպանութիւնը:

Ստախանովականների որինակով, հերոս ողաչունների, սահմանապահների և ուրիշների որինակով, սոցիալիստիկ յերկրի լավագոյն մարդկանց և իր գործարանի, հանքահորի, կոլտնտեսութեան նշանավոր մարդկանց որինակով ազխատորը պետք է

մասսաների մեջ դաստիարակի ել ավելի մեծ նվիրվածութիւն և սեր դեպի իր հայրենիքը, յուրաքանչյուր բանվորի, յուրաքանչյուր աշխատավորի բարձրացնի մինչև սոցիալիզմի ամենատալանալոր կառուցողների մակարդակը, դրդի նույնիսկ ամենահետամնացներին անդադրում աշխատելու իրենց վորակի բարձրացման վրա, իրենց կուլտուրական աճման վրա, ե՛լ ավելի ամրացնի յուրաքանչյուր աշխատավորի մեջ անսահման սեր դեպի իր մեծ հայրենիքը, կոմունիստական կուսակցութիւնն ու խորհրդային կառավարութիւնը, դեպի ԽՍՀՄ—ի Ժողովուրդների մեծ առաջնորդ ընկեր Ստալինը:

Մեր յերկրում մեծ գործեր են կերտվում: Սրանց թվին է պատկանում նաև աշխատավորական կյանքի միջոցով կուլակութեան՝ լիկվիդացիայի յենթարկված շահագործող դասակարգերից ամենավերջինի նշանակելի մասի վերադաստիարակումը: Բայց, պարզաբանելով այս, ազխատորը պետք է հիշեցնի, վոր դասակարգային պայքարը շարունակվում է: Զախջախված թշնամու, վերացված շահագործող դասակարգերի խղճուկ մնացորդների վորոշ մասը դեռևս փորձում է բոլոր միջոցներով, վորտեղ վոր հնարավոր է, վնասել մեր յինարարութեանը, ապականել մեր յերկիրը: Յե՛վ դեռևս գտնվում են մարդկութեան նողկալի տականքներ, վորոնք վորտնձգութիւն են անում հանրային, սոցիալիստական սեփականութեան նկատմամբ:

Նոր Սահմանադրութեան մեջ խոսվում է նրանց մասին, Ժողովրդի թշնամիների մասին: Նոր Սահմանադրութեան մեջ խոսվում է նաև հայրենիքի դավաճանների մասին, վորոնք պատրվում են որենքի ամբողջ խստութեամբ:

Ազխատորը պետք է սրի աշխատավորների ուշադրութիւնը մարդկութեան այս վիժվածքների վրա, կոչ անի բանվորներին, կոլտնտեսականներին ե՛լ ավելի արթուն հեղափոխական գգոնութեան, հիշեցնի, վոր մեր յերկիրը գտնվում է կապիտալիստական շրջապատում, վորի մեջ իրենց ոժանդակութիւնն են տեսնում Ժողովրդի թշնամիները, վորից ոգնութիւն են քաղում հայրենիքի ատելի դավաճանները:

11-282097





Ագիտատորը պետք է հաստատապես յուրացնի, վոր եպոխայիչ այս կարևորագույն վավերագրի բարձրաձայն ընթերցանություն կատարելը մեծ կարևորություն ու պատասխանատվություն ունեցող գործ է: Այս սրտճառով նա ինքն ամենից առաջ պետք է խորամուխ լինի նախագծի ամեն մի հոդվածի մեջ, պատրաստի նրա մեջ հանդիպած ոտար բառերի բացատրությունը, ընարի յուրաքանչյուր հոդվածի ճիշտ ու խելացի բացատրություններ, մտածի, թե ունեկեղիքների մեջ այդ դեպքում ինչ հարցեր կարող են ծագել և ինչպես պետք է նրանց պատասխանել: Ագիտատորը պետք է մանրամասն ծանոթանա թՄՀՄ-ի քարտեզին, վորպեսզի պետական կառուցվածքի վերաբերյալ գլուխը կարգալիս նա պարզ պատկերացնի, թե վորտեղ է գտնվում այս կամ այն մարզը, յերկիրը և այլն, և յեթե նրան հարց տան այս մասին, կարողանա ճիշտ պարզաբանել և քարտեզի վրա ցույց տալ:

Հանձնարարվող զրականության մեջ (նշված) են մի շարք հոդվածներ «Большевик» ից և «Правда»-ից, վորոնց մեջ ագիտատորը հարուստ նյութ կգտնի պարզորոշ, ֆիշտ բացատրություններ տալու նոր Սահմանադրության նախագծի այս կամ այն բաժնի վերաբերյալ (ընդհուպ մինչև նախագծում նշվող նոր հինգ դաշնակից հանրապետությունների սոցիալ-տնտեսական կերպարանքի վերաբերյալ հոդվածներ): Մի շարք նյութեր տրված են այս գրքույկում:

Այս բովորով ագիտատորը լավ պետք է զինվի, վորպեսզի կարողանա նոր Սահմանադրության բարձրաձայն ընթերցանությունները կատարել բարձր մակարդակով, հաղթանակած սոցիալիզմի ստալինյան Սահմանադրության համալիրաբանական պատմական նշանակության համապատասխան:

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՏԱՊՆԵՐԸ

(Պատմական տեղեկանք)

Գ. ՄԻՆԱՅԼՈՎ

1917 թ. սեպտեմբերին գրված «Պրոլետարիատի խնդիրները մեր հեղափոխության մեջ» բրոշյուրում Լենինն ասում է. «... Հեղափոխական ժամանակաշրջանները, սկսած XIX դարի վերջից, առաջադրում են դեմոկրատական պետության բարձրագույն տիպը»: Պետության այն տիպը, վոր մշակեց Փարիզի կոմունան և վորը Մարքսն անվանեց բացահայտ, «փերջապես, բաղաբանական այն ձևը, վորի մեջ կարող է տեղի ունենալ աշխատավորների տնտեսական ազատագրումը», «հենց այս տիպի պետություն սկսեց ստեղծել ուսական հեղափոխությունը 1905 և 1917 թվականներին: Բանվորների, Զինվորների, Գյուղացիների և այլ Պատգամավորական Խորհուրդների Հանրապետություն...— ահա թե ինչն է այժմ, տվյալ ժամանակում արդեն մտնում մեր կյանքի մեջ բազմամիլիոն ժողովրդի նախաձեռնությամբ, վորն ինքնազուխ կերտում է դեմոկրատիան իր ձևով...»¹:

Ինչպես ցույց են տալիս «Բաղաբանական պատերազմի պատմությունը»² և բոլշևիկների ապրիլյան (1917 թ.) համառոտաաստանյան կոնֆերենցիայի արձանագրությունները, արդեն 1917 թ. գարնանը դեմոկրատիայի այս ինքնազուխ, «իր ձևով» կերտումը մի շարք առաջատար շրջաններում (Ուրալ, Դոնբաս, Մոսկվայի շրջակայքը և այլն) գլխավորվում էր բոլշևիկների կողմից, վորոնք այնտեղ իրենց հետևից տանում էին համարյա բոլոր խորհուրդները»: Յեվ, ինչպես այնուհետև նշում էր Լենինը ՌԿ(բ) VIII համագումարում, 1918 թ. խորհրդային առաջին Սահմանադրությունը գրանցեց պրոլետարիատի դե-

¹ Լենին, XX հ., էջ 119:

² I հ., էջ 106—107:

կալար և գերապատիվ դերը խորհուրդներում գյուղացիութան նկատմամբ և բուրժուազիային ընտրական իրավունքներին գրկելու մասին միայն այն բանից հետո, յերբ այս կետերն ինքը կյանքը մտցրեց դեռևս 1917 թվին, Մեծ հոկտեմբերից ստաջ:



1917 թվին (նոյեմբերի 7-8-ին, Հին տոմարով՝ հոկտեմբերի 25—26-ին) Խորհուրդների համառուսաստանյան յերկրորդ համագումարը և նրա կողմից ստեղծված բանվորագյուղացիական կառավարութունը, վորը զլիսավորեց պրոլետարական մեծ հեղափոխութունը, կազմեցին մի շարք պետական ակտեր, ըստ եյության սահմանադրական բնույթի, վորոնցով վորոշվեցին խորհրդային պետության կազմակերպման ու գործունեյության հիմքերը: Այսպիսի ակտեր են հանդիսանում խորհուրդների համառուսաստանյան II համագումարի զիմումը «բանվորներին, զինվորներին և գյուղացիներին», վորի մեջ ասվում է. «Համաձայնողական ԿԳԿ լիազորութունները վերջացան: Հենվելով բանվորների, զինվորների և գյուղացիների հսկայական մեծամասնության կամքի վրա, հենվելով Պետրոգրադում տեղի ունեցած բանվորների ու կայազորի հաղթական ապստամբության վրա, համագումարն իր ձեռքն է վերցնում իշխանությունը: Ժամանակավոր կառավարությունը տապալված է»: «Համագումարը վորոշում է. ամբողջ իշխանությունը տեղերում անցնում է բանվորների, զինվորների և գյուղացիներին պատգամավորական խորհուրդներին, վորոնք պետք է ապահովեն իսկական հեղափոխական կարգը»¹:

II համագումարը նամանակես վորոշեց «մինչև Սահմանադիր Ժողով ղումարելը յերկիրը կառավարելու համար կազմել բանավորական և գյուղացիական Ժամանակավոր կառավարություն, վորը պետք է կոչվի Ժողովրդական կոմիտեաների խորհուրդ: Ժողովրդական կոմիտեաների գործունեյության վերահսկողությունն ու նրանց փոխելու իրավունքը պատկանում է Քանությունն ու նրանց փոխելու իրավունքը պատկանում է Քանություններին, զինվորներին և գյուղացիներին պատգամավորական

¹ «Խորհուրդների համագումարները վորոշումներով և բանաձևերով», էջ 9: Հրատ. Կոմակագեմիայի:
20

կենտրոնական գործադիր կոմիտեյին¹: Սահմանադրական ակտերի նույնպիսի նշանակություն ունեցան համագումարի նաև մի շարք այլ վորոշումներ, այս թվում նաև հողի ու խաղաղության վերաբերյալ վորոշումները, վորտեղ նշվում էր նաև ազգերի ինքնորոշման իրավունքը:

Պրոլետարական դեկտատուրայի պետության սահմանադրությունը հետագայում ստեղծվեց լենինյան մի ամբողջ շարք «Հոկտեմբերի դեկրետներով»—սոցիալիզմի համար լարված պայքարելու այս գործիքներով: Այստեղ առանձնապես մեծ դեր խաղացին այնպիսի դեկրետներ, ինչպես բանվորական վերահսկողության վերաբերյալ, բանկերի և տրանսպորտի ազգայնացման, արտաքին առևտրի մենաշնորհի, վորոստային հողային կոմիտեաների վերաբերյալ դեկրետները: Այս դեկրետները հիման վրա կիրառվեց եքսպրոպրիատորների եքսպրոպրիացիայի և սոցիալիստական հեղափոխության իշխող բարձունքները ամրացման քաղաքականությունը:

Մյուս կողմից մեծ նշանակություն ունեցան ազգային քաղաքականության հարցերի վերաբերյալ դեկրետները, սկսած «Ռուսաստանի Ժողովուրդների իրավունքների դեկլարացիայից», վոր հրատարակված է Լենինի և Ստալինի ստորագրություններով 1917 թվի նոյեմբերի 15-ին (Հին տոմարով՝ 2-ին): Այս դեկլարացիայի յեզրափակիչ մասում ասված է, վոր «Ժողովրդական կոմիտեաների խորհուրդը վորոշեց Ռուսաստանի ազգությունների հարցում իր գործունեյության հիմքը դարձնել հետևյալ սկզբունքները. 1) Ռուսաստանի Ժողովուրդների հավասարություն և սուվերենություն: 2) Ռուսաստանի Ժողովուրդների իրավունքն ազատ ինքնորոշվելու ընդհուպ մինչև անջատում և ինքնուրույն պետության կազմակերպում, 3) բուրժուազիայի և ամեն տեսակ ազգային և ազգային-կրոնական արտոնությունների ու սահմանափակումների վերացում, 4) Ռուսաստանի տերիտորիայում բնակվող ազգային փոքրամասնությունների ու ազգաբնակչության (ետնոգրաֆիական) խմբերի ազատ դարգացում»:

Այս դեկլարացիայի հիման վրա տեղի ունեցավ Ուկրաինայի անկախության ընդունումը 1917 թ. դեկտեմբերի 17

¹ «Խորհուրդների համագումարներ», էջ 16—17:

(4)-ին, Ֆինլանդիայինը՝ ղեկավարների 31 (18)-ին և Հայաստանինը՝ 1918 թվի հունվարի 11-ին:

Քաղաքի նշանակություն ունեցող ակտեր ընդունվեցին խորհուրդների համառուսաստանյան III համագումարում 1918 թվի հունվարի 23—31-ին: Սրանք էին. 1) Ստալինի մասնակցությունը Լենինի գրած և այնուհետև ցրված Սահմանադիր ժողովի կողմից մերժված «Աշխատավոր և շահագործվող ժողովրդի իրավունքների ղեկավարացիան» և 2) համագումարի վերջում ընկեր Ստալինի՝ «Ռուսաստանի հանրապետության Ֆեդերալ հիմնարկների մասին» ղեկուցման առթիվ: Այս յերկու ակտն էլ հիմք հանդիսացան, վորի վրա անմիջականորեն կառուցվեց ՌՍՖՍՀ սահմանադրությունը:

Խորհուրդների համառուսաստանյան IV (արտակարգ) համագումարից (1918 թվի մարտի 14—16) հետո, վոր վավերացրեց «Ղաղարի» վորոշ չըջան աված Բրեստի հաշտությունը, Համառուս. ԿԳԿ ստեղծեց (խորհուրդների III համագումարի հիշատակված վորոշման հիման վրա) խորհրդային Սահմանադրություն մշակող հանձնաժողով: Այս հանձնաժողովն աշխատում էր Լենինի և Ստալինի ղեկավարությամբ: Հանձնաժողովի ներկայացրած ՌՍՖՍՀ Սահմանադրության նախագիծը հաստատվեց խորհուրդների համառուսաստանյան V համագումարում 1918 թ. հուլիսի 10-ին: Խորհուրդների համառուսաստանյան V համագումարին ժողկոմխորհի աված ղեկուցման մեջ Լենինը Սահմանադրության նախագծի առթիվ համագումարի պատգամավորներին ասաց. «Յեթե այժմ այս համագումարին մենք կարող ենք առաջարկել խորհրդային Սահմանադրությունը, ապա այն պատճառով միայն, վոր խորհուրդները յերկրի բոլոր ծայրերում ստեղծված են և վորձված, վորովհետև դուք եք այն ստեղծել, դուք եք յերկրի բոլոր ծայրերում ստեղծել, Հոկտեմբերյան հեղափոխությունից կես տարի հետո միայն, Խորհուրդների համառուսաստանյան Առաջին համագումարից համարյա մի տարի հետո մենք կարող էինք գրանցել այն, ինչ արդեն սոյություն ունի գործնականում»¹:

¹ Լենին, XXIII հ., էջ 121:



Համառուսաստանյան V համագումարի ընդունած ՌՍՖՍՀ սահմանադրությունը հսկայական նշանակություն ունեցավ վոր միմիայն այն ժամանակվա Խորհրդային Ռուսաստանի պետապարտի կազմակերպությունն ու աշխատանքն ամբացելու համար անընդհատ բոցավառվող քաղաքացիական պատերազմի ծանր պայմաններում: Այս սահմանադրությունը դրա հետ միասին հիմք հանդիսացավ ապագա դաշնակից հանրապետությունների սահմանադրությունների համար՝ Խորհրդային Ուկրաինայի, Բելոռուսիայի, Անդրկովկասյան խորհրդային Ֆեդերացիայի հանրապետությունների և իմպերիալիստական պատերազմը քաղաքացիական պատերազմի վերածելու ժամանակ առաջացած՝ Հունգարիայի և Լատվիայի կարճատև խորհրդային հանրապետությունների, վորոնք իրենց խորհուրդների համագումարներում ընդունեցին ՌՍՖՍՀ սահմանադրությանը շատ նման սահմանադրություններ: Այսպիսով, խորհրդային Սահմանադրությունը պայքարի գրոշ դարձավ և գործիք հանուն պրոլետարիատի ղեկատարության ամբողջ աշխարհում:

Քաղաքացիական սրվող պատերազմի պայմանները պահանջում էին խորհրդային յեղբայրական հանրապետություններին ավելի ու ավելի սերտ համագործակցություն, վորի դարպացումը կհանդիսանար Խորհրդային Միությունը կազմելու առաջին քայլը: Խորհրդային հանրապետությունների միավորման պայքարը հռչակվում է Ուկրաինայի բանվորագյուղացիական ժամանակավոր կառավարություն մանիֆեստում ղեկուս 1918 թվի նոյեմբերին, իսկ նրա 1919 թվի հունվարի 28-ի ղեկավարացիություն խոսվում է «ՌՍՖՍՀ-ն և Խորհրդային Ռուսաստանը սոցիալիստական Ֆեդերացիայի հիմունքներով միավորելու» մասին:

Յերևելով պայքարի պայմաններում ստեղծված իրադրությունից և մի շարք խորհրդային հանրապետությունների ցանկություններից, Համառուսաստանյան կենտրոնական գործադիր կոմիտեն 1919 թվի հունիսի 1-ին ղեկրեա է հրատարակում «Ռուսաստանի, Ուկրաինայի, Լատվիայի, Լիտվայի, Բելոռուսիայի խորհրդային հանրապետությունների միավորման մասին՝ համաշխարհային իմպերիալիզմի դեմ պայքարելու համար» և այս ղեկրեաով միավորվում է կառավարումը հետեյալ ասպա-

րեզնեբում . 1) ռազմական, 2) Ժողովրդական տնտեսութեան խորհուրդների, 3) տրանսպորտի, 4) Ֆինանսների և 5) աշխատանքի: Այս ակտը պայմաններ ստեղծեց առաջիկայում խորհրդային Սոցիալիստական Հանրապետութեան Միութեանը կազմելու համար:

Միջազգային և ներքին հակահեղափոխութեան դեմ գինված պայքարելու ընթացքում խորհրդային միջանդի պայմանադիր հանրապետութեաններ կործանվեցին (Լիտվա, Լատվիա), բայց այս նույն պայքարում առաջացան Անդրկովկասի խորհրդային հանրապետութեանները՝ Ադրբեջանը, Վրաստանը, Հայաստանը: 1919 թվի հունիսի 1-ի ակտի հիման վրա ՌՍՖՍՀ հանրապետությունները պայմանագրեր և կնքում խորհրդային բոլոր հանրապետութեանների հետ և ըստ այդ պայմանագրերի խորհրդային բոլոր հանրապետութեանները ՌՍՖՍՀ հետ ռազմաքաղաքական դաշինքի մեջ են մտնում: Այս դաշինքի նպատակն է պայքարել իմպերիալիզմի դեմ, ըստ վորում պահպանվում է խորհրդային ամեն մի հանրապետութեան ինքնուրույնութեանը: Ինտերվենցիայի դեմ ուղղված պայքարի հետևանքները ցույց տվին խորհրդային հանրապետութեանների պայմանագրական հարաբերութեանների այս սխառեմի ամբողջ նշանակությունը:



Ռազմական կոմունիզմի շրջանն անցնելուց հետո, խորհրդային բոլոր հանրապետութեաններում տնտեսական շինարարութեան լայն ծավալումով սկսեց արտահայտվել նախկին պայմանագրական հարաբերութեանների անբավարարությունը: Անհրաժեշտ էր դրանք լրացնել տնտեսական և առհասարակ պետական ավելի սերտ միասնութեամբ: Այսպիսի դաշնակցային պետական միավորութեան առաջինն ստեղծվեց հանձին Անդրկովկասյան Փեղերացիայի (1922 թվի մարտի 12-ին), վորի մեջ մտան Ադրբեջանը, Վրաստանը և Հայաստանը: Սա խիստ հանդիսացավ ստեղծելու խորհրդային բոլոր հանրապետութեանների Միութեան, վորի մասին խոսվում էր նաև ԱՍՖՍՀ սահմանադրութեան 4-րդ հոդվածում:

ԱՍՖՍՀ-ի, Ուկրաինայի և Բելոռուսիայի խորհուրդների համագումարներում վորոշումներ ընդունվեցին խորհրդային պայ-

մանադրային հանրապետութեանները մի միութենական պետութեան մեջ միավորելու մասին:

Սորհուրդների համառուսաստանյան X համագումարում 1922 թվի դեկտեմբերի 26-ին ընկեր Ստալինն ասաց. «Սորհրդային սոցիալիստական հանրապետութեանների միավորման կամպանիան սկսվել է դեռևս սրանից մի յերեք-չորս ամիս առաջ. կամպանիայի իմաստն այն է, վոր պայմանագրային հին հարաբերութեանները—կոնվենցիայի հարաբերութեանները ՌՍՖՍՀ և մյուս խորհրդային հանրապետութեանների միջև—սպառել են իրենց, դուրս յեկավ, վոր բավական չեն: Կամպանիայի իմաստն այն է, վոր պայմանագրային հին հարաբերութեաններից անխուսափելիորեն հարկ է լինում անցնելու ավելի սերտ միավորման հարաբերութեանները,— այնպիսի հարաբերութեանների, վորոնք յենթադրում են միասնական միութենական պետութեան ստեղծում» համապատասխան միութենական գործադիր և որենադիր բնույթի մարմիններով, Միութեան ԿԳԿ ու Ժողկոմխորհ,— կարճ ասած՝ այն, ինչ առաջ դիպվածորեն, կոնվենցիոն հարաբերութեանների շրջանակներումն էր լուծվում՝ ներկայումս կամպանիայի ընթացքում յենթադրվում է ձևակերպել իբրև մի մշտական բան»¹:

Այնուհետև անցնելով այն պատճառներին, «վորոնք հանրապետութեաններին դրդում են դեպի միավորման ուղին», ընկեր Ստալինը նշում է այն յերեք հիմնական պատճառները, վորոնց մասին այնուհետև նա խոսեց XII կուսհամագումարում և նչեց էր դրած և ՍՍՀՄ-ի խորհուրդների I համագումարի ընդունած «ՍՍՀՄ կազմակերպելու վերաբերյալ դեկլարացիայում»: Այս պատճառներն են. առաջին. «Ժողովրդական տնտեսութեան վերականգնումը հանրապետութեանների անջատ դոյութեան պայմաններում անհնարին դուրս յեկավ». յերկրորդ՝ «միջազգային դրութեան անկայունութեան ու նոր հարձակումների վտանգն անխուսափելի յեն դարձնում խորհրդային հանրապետութեանների միասնական ճակատի ստեղծումը հանդեպ կապիտալիստական շրջապատման». յերրորդ՝ «իր դասակարգային բնութեամբ ինտերնացիոնալ խորհրդային իշխանութեան բուն իսկ կառուցվածքը խորհրդային հանրապետութեանների աշխատավոր մասսանե-

¹ Ստալին, «Մարքսիզմը և ազգային-գաղութային հարցը», էջ 124, 1925 թ., Հայկուհարատ:

րին մղում է վորպես սոցիալիստական մի ընտանիք միավորվելու ուղին»¹ :

1922 թվի դեկտեմբերի 30-ին Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունների Միության խորհուրդների I համագումարն ընկեր Ստալինի գեկուցման առթիվ ընդունեց «Պայմանագիր Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության ստեղծելու մասին» : Այն ժամանակ ԽՍՀՄ-ի կազմի մեջ մտան 4 հանրապետություն՝ ՌՍՖՍՀ, Ուկրաինա, ԱՍՖՍՀ և Բելոռուսիա : ԽՍՀՄ I համագումարի ընդունած «դեկլարացիան» և «պայմանագիրը» հանձնվեցին առանձին դաշնակից հանրապետություններին՝ քննարկելու և Սահմանադրությունը մշակելու համար ԽՍՀՄ ԿԳԿ-ին կից կազմված հատուկ հանձնաժողովին՝ մշակելու, վորն աշխատում էր ընկեր Ստալինի գեկավարությունում, վորի «Ազգային մոմենտները կուտակցական և պետական շինարարություն մեջ» գեկուցման առթիվ ՀԿ(բ)Կ XII համագումարը 1923 թվի ապրիլին ընդունեց ԽՍՀՄ Սահմանադրության հիմնական դրույթները :

1923 թվի հունիսին ընկեր Ստալինի գեկուցման այս դրույթները ճշգրտվեցին ՌԿ(բ)Կ Կենտկոմի և ազգային հանրապետությունների ու մարզերի պատասխանատու աշխատողների 4-րդ խորհրդակցությունը, և ԽՍՀՄ ԿԳԿ ընդլայնած հանձնաժողովը գոյություն ունեցող բոլոր գերեկտիվները հիման վրա ԽՍՀՄ ԿԳԿ հերթական նստաշրջանի մտցրեց սահմանադրության նախագիծը, վորը հաստատվեց նստաշրջանի կողմից 1923 թվի հունիսի 6-ին : ԽՍՀՄ սահմանադրության վերջնական հաստատումը տեղի ունեցավ խորհուրդների համամիութենական II համագումարում 1924 թվի հունվարի 31-ին :

1924 թվի վերջին տեղի ունեցավ Միջին Ասիայի ազգային սահմանադրում. ստեղծվեցին թուրքմենական և ուզբեկական ԽՍՀ, վորոնք իբրև դաշնակից հանրապետություններ մտան ԽՍՀՄ կազմի մեջ : Միութենական Սահմանադրության ընդունման կապակցությամբ խորհուրդների համառուսաստանյան XII համագումարը 1925 թվի մայիսի 11-ին ընդունեց ՌՍՖՍՀ նոր սահմանադրությունը, վորի հիմքում դրվեց 1918 թվի սահմանադրությունը : Միութենական Սահմանադրության հիման վրա

¹ Նույն տեղում, էջ 136 :

1925-ից մինչև 1927 թիվը մնացած բոլոր դաշնակից հանրապետություններն ընդունեցին նոր սահմանադրություններ :

1929 թվի դեկտեմբերին Տաջիկստանի ԱԽՍՀ, համաձայն Ուզբեկստանի ԽՍՀ (վորի կազմի մեջ նա մտնում էր) խորհուրդների արտակարգ համագումարի և ԿԳԿ վորոշման՝ վերահաստատվեց իբրև դաշնակից հանրապետություն : Այսպիսով, դաշնակից հանրապետությունների թիվը հասավ 7-ի :

Խորհրդային սահմանադրությունը ղեկի ինքն և դրավում համայն աշխարհի աշխատավորական մասսաների ուշադրությունն ու հետաքրքրությունը և վոգեչնչում է նրանց հեղափոխական պայքարի : Յերբ խորհրդային Չինաստանի աշխատավորներն սկսեցին ստեղծել իրենց խորհուրդները, նրանք իրենց աչքի առջև ունեցին Խորհրդային Միության որինակն ու նրա Սահմանադրությունը : 1931 թվի նոյեմբերի 7-ին Խորհուրդների համաշխրական առաջին համագումարը հուշակեց խորհրդային չինական հանրապետություն և ընդունեց խորհրդային Չինաստանի սահմանադրության նախագիծը՝ հաստատված 1934 թվի հունվարին Խորհուրդների համաշինական յերկրորդ համագումարում : Այս սահմանադրության առթիվ դրույթները վերցված են Խորհրդային Միության Սահմանադրությունից :

ԽՍՀՄ Սահմանադրությունը մասնակի վերանայման և յենթարկվել ԽՍՀՄ, խորհուրդների բոլոր համագումարներում, վորոնք սոցիալիստական շինարարության հաջողությունների կապակցությամբ նրա մեջ մտցրել են դանազան մասնակի փոփոխություններ՝ ղլխավորապես կենտրոնական ուղանների վերահաստատման դժով—ժՏԳԽ փոխարեն ստեղծելով ծանր արդյունաբերություն, թեթև արդյունաբերություն, անտառային արդյունաբերության ժողկոմատներ, ԲԳՏ ժողկոմատի փոխարեն՝ Խորհրդային Վերահսկողություն Հանձնաժողով, ՄՊՔՎ փոխարեն՝ ՆԳՔԿ, վերացնելով ժողկոմատների կոլեգիաները և ժողկոմատներին կից ստեղծելով խորհուրդներ, ստեղծելով միութենական դատախազություն, վերակազմելով Գերագույն դատարանը և այլն :

Սոցիալիստական հանրային սեփականության, իբրև խորհրդային հասարակարգի հիմքի, վերջնական հաղթանակի կապակցությամբ խորհուրդների համամիութենական VII համագումարը ՀամԿ(բ)Կ Կենտկոմի փետրվարյան (1935 թվի) պլենումի վորոշման հիման վրա, վոր վերաբերում էր ընկեր Ստա-

լինի նախաձեռնութեամբ ԽՍՀ Միութեան Սահմանադրութեան մեջ միջանի փոփոխութեան մտցնելու անհրաժեշտութեանը, պատմական վորոշում ընդունեց ընտրական սխտեմի հետագա զեմոկրատացման և Սահմանադրութեան սոցիալ-տնտեսական հիմքը ճշգրտելու մասին՝ ԽՍՀՄ դասակարգային ուժերի ներկայիս հարաբերակցութեան համապատասխան: Այս հիմունքներով նոր սահմանադրութիւն մշակելու համար 1935 թվի փետրվարի 7-ին ԽՍՀՄ ԿԳԿ ստեղծեց մի հանձնաժողով՝ ընկեր Ստալինի նախագահութեամբ, վորը (հանձնաժողովը) 1936 թվի մայիսի 15-ին հաստատեց խորհրդային նոր սահմանադրութեան՝ բանվորների և գյուղացիների սոցիալիստական պետութեան սահմանադրութեան, մշակված նախագիծը:

1936 թվի հունիսի 1-ին ՀամԿ(բ)Կ Կենտկոմի պլենումը ԽՍՀՄ Սահմանադրութեան նախագծի վերաբերյալ ընկեր Ստալինի ղեկուցման առթիվ վորոշեց.

«ա) Հիմնականում հավանութիւն տալ ԽՍՀ Միութեան ԿԳԿ Սահմանադրական Հանձնաժողովի ներկայացրած՝ ԽՍՀՄ Սահմանադրութեան նախագծին:

բ) Նկատի ունենալով հարցի հատուկ կարևորութիւնը, նպատակահարմար գտնել Խորհուրդների համամիութենական համագումար հրավիրել՝ ԽՍՀՄ Սահմանադրութեան նախագիծը քննութեան առնելու համար»:

Իսկ 1936 թվի հունիսի 11-ին ԽՍՀՄ ԿԳԿ նախագահութիւնը, հավանութիւն տալով նոր սահմանադրութեան նախագծին, վորոշեց 1936 թ. նոյեմբերի 25-ին հրավիրել Խորհուրդների համամիութենական համագումար՝ նախագիծը քննելու, նախապիս հրապարակելով այն համաժողովրդական քննարկման համար:

Այս և ամենահամառոտ գծերով խորհրդային Սահմանադրութեան զարգացման ուղին, մի ուղի՝ վոր անխզելիորեն կապված է պատմական այն մեծ ուղու հետ, վոր սկսած 1917 թ. Հոկտեմբերի պրոլետարական հեղափոխութեան մոմենտից՝ անցել են մեր յերկրի բանվոր դասակարգը, գյուղացիութիւնն ու բոլոր աշխատավորները Լենինի—Ստալինի կուսակցութեան ղեկավարութեամբ:

ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՅԵՐԿԻՐՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գ Ե Ր Մ Ա Ն Ի Ա

Մ. ՅՈՒ. ԴՐԻՎ

Գերմանիայում մինչև Ֆաշիստական ղեկաւարտւած հաստատուելը դործում էր Վայմարի Աղգային ժողովում 1919 թվի ոգոտոսի 11-ին ընդունված՝ սահմանադրութիւնը, վորը պաշտոնապես չի վերացված մինչև որս: «Գերմանական կայսրութիւնը հանրապետութիւն է: Պետական իշխանութիւնը բղխում է ժողովրդից»—այսպես է ասված Վայմարի սահմանադրութեան 1-ին հոդվածում:

Սակայն այս նույն սահմանադրութեան 48-րդ հոդվածը պետութեան գլուխ—հանրապետութեան նախագահին, վորն ընտրվում էր 7 տարով, անսահմանափակ իրավունքներ էր վերապահում ղեկաւարտական ազատութիւնները վոչնչացնելու դործում: Այս հոդվածում ասված է.

«Յեթե Գերմանիայի սահմանների մեջ լրջորեն խախտված է հանրային ապահովութիւնը և կարգը կամ յեթե ահնեք և այլպիսի խախտման լուրջ վտանգը, ապա նախագահը կարող է միջոցներ ձեռք առնել, վորոնք անհրաժեշտ են հանրային ապահովութիւնն ու կարգը վերականգնելու համար, և հարկ յեղած գեպքում կիրառել զինված ուժ: Այս նպատակով նա կարող է ժամանակավորապես դադարեցնել... հիմնական իրավունքների յերաշխիքները, վոր սահմանված են սահմանադրութեան 114, 115, 117, 118, 123, 124 և 153 հոդվածներով»: (Այս հոդվածները նախատեսում են անձի ու բնակարանի անձեռնմխելիութիւն, նամակադրութեան դադարեցում, խոսքի ու մամուլի ազատութիւն, միութիւնների ու ժողովների ազատութիւն և այլն):

Վայմարի սահմանադրութեամբ Գերմանիայում գերազույն որենադրական հիմնարկը հանդիսանում էր ռալիստազը (պառլամենտ), վոր ընտրվում էր 4 տարով ընդհանուր, հավասար և գաղտնի ընտրական իրավունքով, վորից ոգտվում են յերկու սեռի

բոլոր 20 տարիքի հասած անձինք: Բոլոր ընդունվող որենքների նախադժերը պետք է համաձայնեցվեյին ուսխստազի հետ, իբրև «գերմանական մարզերի ներկայացուցիչ որենսդրութան և սեփութան կառավարման ժամանակ»:

Հենված Վայմարի սահմանադրութան 48-րդ հոդվածի վրա, հրատարակելով անթիվ «արտակարգ դեկրետներ»՝ ուղղված աշխատավորութան դեմ, գերմանական բուրժուազիան սոցիալ-դեմոկրատական առաջնորդների ոգնութամբ քայլ առ քայլ վոչնչացրեց դեմոկրատական արդեցությունները և ճանապարհ հարթեց Փաշխատական բացահայտ դեկտատուրայի համար:

1932 թվի հունիսի 20-ին Փոն Պապենի կառավարութունը բացահայտ հարված հասցրեց սահմանադրութանը՝ ցրելով պրուսական կառավարութունը, վորի գլուխ եր կանգնած մինիստր-նախագահ սոցիալ-դեմոկրատ Բրաունը: Հիտլերի՝ իշխանութան գլուխ անցնելը 1933 թվի հունվարի 30-ին ավարտեց Պապենի սկսած վայմարյան սահմանադրութան վոչնչացումը: Փետրվարի 4-ին 48-րդ հոդվածի հիման վրա նախագահ Հինդենբուրգը վորոշում հրատարակեց սահմանադրութան վերև հիշատակված 114, 115 և այլ հոդվածները վերացնելու մասին: Փետրվարի 27-ին, Փաշխտների կողմից ուսխստազը հրկիզվելուց հետո, Հինդենբուրգը, նմանապես 48-րդ հոդվածի հիման վրա, վորոշումներ ստորագրեց, վորոնց համաձայն ցրվեցին կոմկուսակցութան բոլոր կազմակերպությունները, վոչնչացվեց նրա մամուլը և ձերբակալվեցին հեղափոխական պրոլետարիատի հազարավոր լավագույն զավակներ: Այս նույն վորոշումների հիման վրա ստեղծվեցին համակենտրոնացման ճամբարներ, մտցվեց մահապատիժ, որինակրանացվեց զնդակահարությունը «վախչելու փորձ անելիս» և այլն:

1933 թվի մարտի 5-ին ամենադաժան տեղորի պայմաններում կատարվեցին ուսխստազի ընտրությունները: Կոմունիստները, չնայած Փաշխտական զազանային տեղորին, ստացան 4,8 միլիոն ձայն և 82 մանդատ: Սակայն կոմունիստ պատգամավորներին թույլ չտվին ուսխստազ մտնելու. նրանց մանդատները վոչնչացվեցին, և այն պատգամավորները, վորոնք չկարողացան թազնրվել, ձերբակալվեցին:

Մարտի 24-ին նոր ուսխստազն որենք ընդունեց Հիտլերի,

իբրև «առաջնորդի ու ուսխստանցիների» լրագորությունների մասին, վորի ձեռքում կենտրոնացված է ամբողջ իշխանությունը:

Վայմարի սահմանադրութան ճակատագիրը լուծված եր:

Հունվարի 30-ի որենքով վերացվում են մարզերի լանդտագները (զավառարան պառլամենտներ), դերագույն իշխանությունն անցնում է համակայսերական կառավարութանը: Փետրվարի 14-ի որենքով վերացվում է նաև ուսխստազը (պետական խորհուրդը, վերին պալատը):

Անձեռնմխելի յեր մնում Վայմարի սահմանադրութան այն հոդվածը, վոր վերաբերում եր «նախագահի իրավունքներին»: Հինդենբուրգի մահվանից հետո այն ել վերացավ: Որոտտոսի 2-ին կառավարությունն որենք հրատարակեց, վորը վերացնում է նախագահի պաշտոնը և Հիտլերին ոժտում պետութան «առաջնորդ և կանցլեր» ցմահ կոչումով, ընդվորում Հիտլերին, ինչպես միապետին, իրավունք է վերապահվում իր համար նշանակելու նաև ժառանգորդ:

Հիտլերի՝ իշխանութան գլուխ անցնելու յեռամյա տարեդարձի առթիվ ներքին գործոց մինիստր Յրիկն այսպես բնորոշեց Փաշխտական Գերմանիայի պետական կարգը.

«Յերբորդ կայսրությունը գրված սահմանադրությունն չունի ավտորիտար պետութան պետական իրավունքը դեռևս գոմվում է ինելության փուլում: Երայնչափ սահմանափակ նշանակություն ունի նաև կառավարությունը: Մինիստրների խորհրդում այլևս ձայների մեծամասնությամբ վորոշումներ չկան: Ամեն ինչ վնոում է Հիտլերի կարծիքը»:

Ռախստազը դեռ գոյություն ունի նաև այսոր, բայց նա վոչ մի նշանակություն չունի և միայն յերբեմն լսարան է հանդիսանում Հիտլերի ճառերի համար: 1933 թվի նոյեմբերի 12-ից մինչև 1936 թվի մարտի 7-ն ընտրված ուսխստազում կայացել է ընդամենը 5 նիստ, յուրաքանչյուրը 1½ ժամով (կախված Հիտլերի ճառի տևողությունից): Ռախստազում վիճարանություններ չեն թույլատրվում:

Այս «լարված աշխատանքի» համար ուսխստազի ամեն մի անդամ (վերջին ընտրություններին դրանց թիվն եր 740) ամսական ստանում է 600 մարկ հոնորար: Ռախստազի նախագահ Գյոթլին-

գը ուսյխատագի իր «գործունեյության» համար տարեկան ստանում է 30 հազար մարկ:

Ուսյխատագի ընտրություններին յերևում է միայն թեկնածուների Ֆաշիստական ցուցակը, վորի գլուխ դրված են Հիտլերի, Հեսսի, Գյորինգի, Գերբեյտի և այլոց ազգանունները, այլև «անկուսակցականներ», ինչպիսիք են խոշորագույն կապիտալիստներ Տիսսենը, Կրուպպը, Հուգենբերգը և այլն:

Յերբ 1934 թվի հունիսի 30-ին գնդակահարվեցին ուսյխատագի միջանի անդամներ գերհային ջոկատների ղեկավարներից, նրանց տեղը նոր անդամներ նշանակվեցին ուղղակի ուսյխատագի նախագահի հրամանով:

Ընտրությունների իրադրության և մեթոդների համար բնորոշ է հետևյալ տրինակը, վորի մասին հաղորդում էր «Ֆրանկֆուրտեր ցայտունգ»-ը. «Լաուտենտալում (Հարց) մի համառ բնակիչ, վորը հրաժարվեց ընտրություններին մասնակցելուց, աշխատանքից հանված է և ձերբակալված»:

Իսկ Հեսսեն-Նասաույում պրոպագանդի մարզային ղեկավարը հայտարարել է. «Մենք չենք սպառնում, բայց ով վոր չի գնա ընտրություններին, նա իրավունք չունի դերմանացի կոչվելու»:

Թե ինչ է նշանակում «յերբորդ կայսրության» մեջ լինել վոչ-գերմանացի, այս մասին ամենից ավելի լավ կարելի յե գատուել «վոչ-արիացիների» դեմ ուղղված անհամար որենքներով: Վոչ-արիացիները «քաղաքացիներ» չեն, այլ միայն համարվում են Գերմանիայի «հպատակներ»: Նրանք զուրկ են ամեն մի քաղաքական իրավունքից (այս իրավունքից փաստորեն զրկված են նաև Գերմանիայի աշխատավորության լայն մասսաները): Նրանց ծառայության չեն ընդունում պետական հիմնարկները, նրանց ազատ արհեստներ թույլ չեն տալիս: Սմունսություններ թույլ չեն տրվում արիացիների և վոչ-արիացիների միջև (բացառություն է արված ճապոնացիների համար): «Ռասայական» զազանային հարածանք, ազգային փոքրամասնությունների կատարյալ իրավապարկություն, ամենազաժան տեռոր, կուլտուրայի, մարդկային անձի ծաղրանք, յերկրի վերածում ուղղական մի հոծ կաղարմայի — այս է Ֆաշիստական Գերմանիայի «սահմանադրությունը»:

Ի Տ Ա Լ Ի Ա

Իտալիայում մինչև որս գոյություն ունի (ձևականորեն) սահմանադրություն՝ ընդունված դեռևս 1848 թ. յերկրի ազգային միավորությունից հետո: 1922 թվից Մուսսոլինիի՝ իշխանության գլուխ անցնելուց հետո այս սահմանադրությունը պաշտոնապես չվերացվեց: Բայց իբրև թե չվերացնելով սահմանադրությունը, Ֆաշիստական կառավարությունն իր իշխանության 10 տարվա ընթացքում այնպիսի փոփոխությունների յենթարկեց այն, վոր սահմանադրությունից փաստորեն վոչինչ չմնաց:

Իտալական 1848 թ. սահմանադրությունը նախատեսում էր պառլամենտ յերկու պալատից. 1) սենատից, վորի անդամներին նշանակում է թագավորը, և 2) պատգամավորների ընտրվի պալատից:

Իտալական Ֆաշիզմն արմատապես ռեֆորմի յենթարկեց ընտրական սխտեմը, նրանից հեռացնելով դեմոկրատիզմի ամեն մի հետք: «Մաշիստական մեծ խորհուրդը», վոր միաժամանակ հանդիսանում է թե՛ կառավարական և թե՛ կուսակցական որդան, իր հայեցողությամբ ընտրում է ներկայացված հազարավոր թեկնածուներից 400 հոգի՝ պատգամավորների պալատի համար: Այս ցուցակն ամբողջությամբ առաջարկվում է բնակչությանը՝ քվեարկելու համար:

Ընտրություններին իրավունք ունեն մասնակցելու տարեկան 100 լիրայից¹ վոչ պակաս հարկ վճարող քաղաքացիները: Այսպիսով, ընտրություններին մասնակցելու իրավունքից զրկված են ինչպես աշխատավորների քիչ վարձատրվող կատեգորիաները, այնպես էլ գործազուրկները: Կանայք ամբողջովին գուրկ են ընտրական իրավունքից: Այս կապակցությամբ Իտալիայի 42 միլիոն բնակչությունից ընտրություններին մասնակցելու իրավունք ունեն միայն 10 միլիոն հոգի:

Կատարելով ընտրական իրավունքի այս «ռեֆորմը», իտալական Ֆաշիզմը հարձակում գործեց բուն պառլամենտի վրա, հաստատելով կառավարության անկախությունը պառլամենտից և ամբողջ իշխանությունը կենտրոնացնելով գործազիր որդանների ձեռքում:

¹ Լիրան, ՌՍՀՄ Գեաբանիկ ներկայիս կուբով, մոտ 40 կոպեկ է:

1925 թվի դեկտեմբերի 24-ի որենքով Փաշխատական կառավարությունն ապահովեց իր անկախութիւնը պառլամենտից: «Կառավարութեան առաջնորդի լիազորութիւնները ու իրավասութիւնները մասին» այս որենքը վերացնում է պառլամենտի որենսդրական իրավունքները, ինչպէս և կառավարութեան վրա վերահսկելու նրա իրավունքը: Կառավարութեան գլուխը պատասխանատու յետ և իր քաղաքականութեան համար միայն թագավորի առջև, վորպիսի պատասխանատուութիւնը, սակայն, նույնպէս զուտ ձևականութիւն է: Սրանից դատ, պառլամենտը կախման մեջ է դրված կառավարութեան գլխից, քանի վոր յերկու պալատները ել որակարգը նա պետք է նախապէս հաստատի:

Իտալական Փաշիզմը պառլամենտից վտարեց ուղղիցիային և հակաֆաշիստական կուսակցութիւնները հայտարարեց որենքից դուրս: Պարզ է, վոր այս սիստեմի դեպքում թե՛ պատգամավորները պալատը և թե՛ սենատն ըստ ելութեան հանդիսանում են Փաշիստական չինովնիկների ժողով և հլու գործիք Փաշիստական կառավարութեան ձեռքին:

1928 թ. դեկտեմբերի 9-ի որենքով «Փաշիստական մեծ խորհուրդը», վոր մինչև այժմ միայն կուսակցական բարձրագույն որգանն էր, միաժամանակ դարձվեց պետական բարձրագույն որգան: Նրա կազմի մեջ մտնում են կառավարութեան գլուխն իբրև նրա նախագահ, յերկու պալատների նախագահները, մինիստրները, Փաշիստական կուսակցութիւնների քարտուղարները, Փաշիստական միլիցիայի ղեկերալիսիմուսը, Փաշիստական «Արշալ դեպի Հոտմ»-ի առաջնորդները, ինչպէս և «ազգի և Փաշիստական հեղափոխութեան հանդեպ հատուկ ծառայութիւն մատուցած անձինք», վորոնք նշանակվում են 3 տարով: Որենքով սահմանադրական իրավական բնույթի բոլոր հարցերի առթիվ պետք է լինի «Փաշիստական մեծ խորհուրդի» կարծիքը, մինչև վոր այդ հարցերի վերաբերյալ վորևէ վորոշում ընդունվի: Վորովհետև «Փաշիստական մեծ խորհուրդը» միաժամանակ նաև կուսակցական գերագույն որգանն է, վորից կախված են կուսակցութեան քաղաքական գծի փոփոխութիւնն ու հաստատումը, ապա նա դրանով իսկ հանդիսանում է պետութեան և Փաշիստական կուսակցութեան միավորումը:

Հատուկ ուշադրութեան արժանի յետ Փաշիստական որենսդրութիւնն այսպէս կոչված «կորպորատիվ» պետութեան ասպարե-

զում: «Կորպորատիվ պետութեան» թեորիան արտահայտում է Փաշիզմի ձգտումը՝ մասսաներին ներշնչելու այն պատկերացումը, թե Փաշիստական պետութիւնը կապիտալիստական տիրապետութեան գործիք է, այլ «դասակարգերի հաշտեցման» գործիք: 1927 թվի ապրիլին «Փաշիստական մեծ խորհուրդը» հրատարակեց «աշխատանքի խարտիա», վորը հռչակեց «համերաշխութիւն արտագրութեան զանազան ֆակտորների միջև՝ գործատուների և աշխատողների հակադիր շահերը հաշտեցնելու ձևով և նրանց յենթարկելով արտագրութեան գերագույն շահերին»: Կառավարութիւնը վարձու աշխատանքի շահերի ներկայացուցչութիւնը տվել է միայն Փաշիստական արհմիութիւններին: Այն արհմիութիւնները, վորոնք մերժել են «դասակարգերի գործակցութեան» Փաշիստական թեորիան, յենթարկվել են ամենադաժան հալածանքների և արգելվել են:

1936 թ. ապրիլի 3-ի որենքով վերացվեց աշխատավորների իրավունքը՝ ինքնուրույնաբար պաշտպանելու իրենց տնտեսական և քաղաքական շահերը: Գործադուլը համարվեց քրեական հանցանք:

Մինչև այժմ ստեղծված են 22 այսպէս կոչված ճյուղային կորպորացիաներ ըստ գյուղատնտեսական մթերքների առանձին տեսակների և ըստ արդյունաբերական առանձին ճյուղերի: Այս կորպորացիաների մեջ մտնում են արդյունաբերողների և ագրարների համապատասխան կազմակերպութիւնների ներկայացուցիչները, Փաշիստական արհմիութիւնների, Փաշիստական կուսակցութեան ու պետութեան ներկայացուցիչները: Բոլոր կորպորացիաների գլուխ կանգնած է Մուսսոլինին:

Այս ամբողջ սիստեմի կենտրոնումն են գտնվում «կորպորացիաների ազգային խորհուրդը», վոր կորպորացիաներն ու արհմիութիւնները կապում է վարչական որգանների և Փաշիստական կուսակցութեան հետ, և կորպորացիաների մինիստրութիւնը, վոր տնորինում է առևտրի և արդյունաբերութեան հարցերը, ինչպէս և արհմիութիւնների գործունեութիւնը, այսպիսով իրականացնելով աշխատանքի ու կապիտալի շահերի «միասնութիւնը»:

«Կորպորատիվ կազմակերպութիւնների» ծածկոցի տակ Փաշիստական դիկտատուրան հոգուտ մոնոպոլիստական կապիտալի կատարի հարձակում է գործում աշխատավորական մասսաների կենսական մակարդակի վրա, մորիլիզացիայի յետ յենթարկում

յերկրի բոլոր ռեսուրսները պատերազմի պատրաստութեան համար և թիկունքը կազմակերպում է արտաքին քաղաքական ռազմական ավանտյուրաների համար: Ինչ վերաբերում է խտրական գաղութներին (Աֆրիկայում), ապա նրանց բնակչուկները նույնիսկ ձևականորեն զուրկ է վորեւ իրավունքից, և խտրական դադութարարները քամահրանքը նրանց հանդէպ սահման չունի: Կատարյալ իրավադրուկներ, բնաջնջում ու ստրուկներն է բերում խտրական Փաշիզմը նաև իր զայլթած Հարեչատանի բնակչութեանը:

Լ Ե Շ Ա Ս Տ Ա Ն

1935 թ. մարտին ընդունված լեհական նոր սահմանադրութեանը հաջով յերրորդն է Լեհաստանի գոյութեան ժամանակից սկսած: Առաջին սահմանադրութեանը հետաքստերազմյան լեհական պետութեան մեջ ընդունվեց 1921 թ. մարտին: Մինչև այդ ժամանակ գործում էր սեյմի կողմից 1919 թ. փետրվարին ընդունված «փոքր սահմանադրութեանը»: 1921 թ. սահմանադրութեանը հաստատում էր բուրժուական դեմոկրատիայի ու պառլամենտարիզմի ռեժիմ: Նրա հիմքում դրվեց իշխանութեանները բաժանման սկզբունքը—որենադիր իշխանութեան՝ սեյմն ու սենատը, գործադիրը՝ նախագահն ու մինիստրները: Մինիստրները պատասխանատու էին համարվում սեյմի առաջ: Սահմանադրութեանը սեյմի ու սենատի ընտրութեանները նախատեսում էր ընդհանուր, գաղտնի, ուղղակի, հավասար ու համամասնական քվեարկութեան հիման վրա: Այս սահմանադրութեանը հայտարարեց նաև բոլոր քաղաքացիների իրավունքի մասին՝ ազատորեն արտահայտելու իրենց մտքերն ու համոզմունքները, և հանդիսավոր կերպով ազդարարեց մամուլի ազատութեանը, ժողովների ու միութեանների ազատութեանը: Հենց նա էլ սահմանում էր, վոր սովերեն իշխանութեանը յերկրում պատկանում է սեյմին, իսկ «պետութեան պետը», վոր դեռ 1918 թ. նոյեմբերին դարձավ Պիլսուդսկին, լոկ սեյմի վորոշումների կատարողն է:

1929 թ. սեյմի կառավարական բլոկն առաջարկ մտցրեց սահմանադրութեան մեջ փոփոխութեաններ անելու, վորոնք սահմանափակում են պառլամենտի իրավունքները: Սակայն այս սուս-

ջարկի կենսագործումը հետաձգվեց: Միայն 1933 թվականի վերջում կառավարական վերնախալն արագացրեց նոր սահմանադրութեան մշակման աշխատանքը:

1935 թվականի մարտին նոր սահմանադրութեանն ընդունվեց սեյմի կողմից: Նոր սահմանադրութեան հիմնական սկզբունքն է՝ ամբողջ իշխանութեանը կենտրոնացնել նախագահի ձեռքում և պառլամենտը յենթարկել նրան: Նախագահն է նշանակում մինիստրները խորհուրդը, գումարում և արձակում սեյմն ու սենատը: Նա զինված ուժերի պետն է, վճռում է պատերազմի ու հաշտութեան հարցը, կնքում և ռասիֆիկացիայի յե յենթարկում (հաստատում) ոտարեկրյա պետութեանները հետ կապած պայմանագրերը: Նա ինքն է նշանակում գլխավոր հրամանատարին պատերազմի ժամանակ: Սեյմի սենատների միջև ընկած ժամանակաշրջանում նախագահը կարող է դեկրետներ հրատարակել, վորոնք որենքի ուժ ունեն: Նախագահին իրավունք է վերապահված բողոքարկել սեյմի ամեն մի վորոշում, նշանակել սենատի անդամների մի յերրորդը և իր ստանձնած պաշտոնի ժամանակը լրանալուց հետո յերկու թեկնածուներից մեկին առաջ քաշել նախագահի պաշտոնի համար: Նոր սահմանադրութեանը համաձայն մինիստրների խորհրդի նախագահն ու կաբինետի անդամները քաղաքականապես պատասխանատու յեն նախագահի առաջ և նրա կողմից կարող են պաշտոնից հեռացվել ցանկացած մոմենտին:

Նոր սահմանադրութեամբ որենադիր պառլամենտի Փունկցիաներն ու նշանակութեանը զգալիորեն սահմանափակվում են: Սեյմի ու սենատի հենց բուն սահմանադրութեան մեջ մտցված են էյական փոփոխութեաններ: Ընտրողների տարիքային ցենդը բարձրանում է 21-ից մինչև 24 տարի: Նոր սահմանադրութեանը վերացնում է ընտրութեանների համամասնականութեանը: Խոշոր չափով սահմանափակված է պատգամավորների անձեռնմխելութեանը՝ սեյմում ունեցած նրանց գործողութեանների ու յելույթների համար: Սեյմից դուրս անձեռնմխելութեանն իսպառ վերանում է: Հանրապետութեան զինված ուժերը համարյա բոլորովին հանված են սեյմի իրավասութեանից ու հանձնված նախագահի բացառիկ անտրինութեանը:

Այս է ընդհանուր գծերով պետական իշխանութեան նոր կառուցվածքը, վոր նախատեսված է 1935 թվականի մարտի 23-ի լեհական սահմանադրութեան կողմից:

Լեհաստանում տիրում է սարսափելի սով: Գործազրկութիւնը վիթխարի չափեր է ընդունել, գյուղն աղքատանում է, արյունահեղ դատաստաններ են տեսնում գործադուլավորների նկատմամբ: Աղգային փոքրամասնութիւնները յենթարկվում են մեծապետական անտանելի ճնշման:

Լեհաստանի բելոռուսական, ուկրաինական և այլ շրջանները, վորտեղ ագգային փոքրամասնութիւններն են բնակվում, սեյմի բնորութիւններին զգալիորեն ավելի փոքր նորմաներով են ողորդվում, քան լեհ բնակչութիւնն ունեցող շրջանները: Իշխանութիւններին կիրառած զազանային տեռորն ընտրութիւնների ժամանակ այս կրճատած նորմաներն էլ համարյա վոչնչի յե հանդեցնում:

Ճաշխոտական նոր սահմանադրութիւնը Լեհաստանի աշխատավորների համար բերում է սով, տեռոր և պատերազմ:

Ա Վ Ս Տ Ր Ի Ա

Մինչև Փաշիգմի՝ իշխանութիւն գլուխ անցնելն Ավստրիան քուրժուական աշխարհում համարվում էր ամենադեմոկրատական յերկիրներից մեկը: Համաձայն Ֆեդերատիվ սկտութիւն սահմանադրութիւն ընդունված 1920 թ. հոկտեմբերի 1-ին՝ որենսդիր իշխանութիւնը պատկանում է պառլամենտի ստորին պալատին, վոր ընտրվում է ընդհանուր զազտնի քվեարկութիւն 4 տարով, համամասնական ներկայացուցչութիւն սկզբունքներով: Ընտրական իրավունքից ողորդում են քսանից վոչ պակաս տարիք ունեցողները: Վերին պալատը ներկայացնում է Դաշնակցային խորհուրդը (բունդեսռատ), վորն ընտրվում է ղեմստվային ժողովների կողմից (առանձին զավառների լանդտագներին կողմից): Գերազույն գործադիր իշխանութիւնը պատկանում է նախագահին, վորն ընտրվում է յերկու պալատների միացյալ նիստում՝ 4 տարով:

Ավստրոմարքսիստական լիգերները («ձախ» մենչեիկներին այստեղի տարատեսակութիւնը), վկայակոչելով այս սահմանադրութիւնը, յերկար ու ձիգ տարիների ընթացքում ավստրիական պրոլետարիատին որորում է յին կեղծ իլլուզիայով այն մասին, թե պետական իշխանութիւնը նվաճելու համար հարկ չկա հե-

ղափոխութիւն, այլ բավական է ընտրութիւններին նվաճել ձայների 51%-ը, և այն ժամանակ սոցիալ-դեմոկրատները պառլամենտում կունենան մեծամասնութիւն, իսկ կապիտալիստներն իրենք կհանձնեն իշխանութիւնը պրոլետարիատին:

1933 թ. մարտի 4-ին ավստրիական պառլամենտը, վորը ձայների մեծամասնութիւնը կառավարութիւնն անլստահութիւններ հայտնել, ցրվեց: Ուղղիցիայի վորձը՝ գումարել պառլամենտը՝ խեղդվեց վոստիկանութիւն կողմից, վորը զբաղվել էր պառլամենտի շենքի բոլոր մուտքերը: Սահմանադրութիւն բախտը սրանով վորոշվեց: Բուրժուազիան սոցիալ-դեմոկրատներին գործնականում ցույց տվեց, թե նա ինչպէս է «խաղաղ» ձանադարհով «հանձնում իշխանութիւնը»:

Ավստրիայում սկսվեց Փաշիգմի արյունոտ դիկտատուրան: Մամուլի, ժողովների ու միութիւնների ազատութիւնը սահմանափակվեց, կոմկուսակցութիւնն ու նրա «Ռոտե Փանե» որգանի գործունէութիւնն արգելվեց: Ավստրիական բանվորների 1934 թվականի փետրվարի զինված մարտերից հետո արգելեցին նաև սոցիալ-դեմոկրատական կազմակերպութիւններն ու մամուլը:

1934 թ. մայիսի 1-ին Փաշիստական դիկտատորներն Ավստրիան բախտավորեցին մի նոր սահմանադրութիւն: Վորպէսպի ստանա պառլամենտի կողմից նոր սահմանադրութիւն թեկուզ Ֆիկտիվ հաստատումը, Դուլֆուսի կառավարութիւնը վոչնչացրեց սոցիալ-դեմոկրատներին ավելի քան 70 մանդատը և հայտարարեց, վոր պառլամենտը բաղկանալու յե վոչ թե 165, այլ 91 անդամից և վոր սահմանադրական վորոշումներն ընդունելու համար բավական է 46 ձայն:

Ամբողջ սահմանադրութիւնն իր մեջ չի բովանդակում և վոչ մի կետ, վորը վորեւէ չափով սահմանափակեր կառավարութիւն իշխանութիւնը: Իշխանութիւնն աղբյուրը—«հայրենական Փրոնտը»—Փաշիստական կազմակերպութիւնն է, վորի ղեկավարն ինքը կանցլերն է:

Մնացած բոլոր քաղաքացիները—«հայրենական Փրոնտի» վոչանդամները—դառնում են յերկրորդ կարգի քաղաքացիներ: Նրանք զրկված են հնարավորութիւնից՝ վոչ միայն մասնակցելու յերկրի քաղաքական կյանքին, այլև պետական վորեւէ պաշտոն զբաղելու:

Նախագահին ընտրում է քաղաքազլուխների համագումարը,

վորոնց ընտրում են «Հայրենական Փրոնտի» նույն կազմակերպությունները և հաստատում և կառավարությունը: Ուրիշ խոսքով, նախագահին ընտրում են նրանք, վորոնց, հենց այս նպատակի համար, ջոկել և ինքը՝ նախագահը: Այս յեղանակով «ընտրված» նախագահը նշանակում և կառավարությունը գլուխ և վերջինս առաջարկով նշանակում մինիստրներ:

Ստեղծված 4 «կորպորատիվ պալատները» բաղկացած են նշանակովիներեց և ոժտված են խորհրդակցական արգանների ֆունկցիաներով միայն, որգաններ, վորոնց կառավարությունը բնավ սրարտական չե հաշվի առնել:

Սահմանադրությունը կազմված և Հոռմի պապի ցուցումների վորով և հաստատում և յեկեղեցական խավարապաշտների տիրապետությունը յերկրի կյանքում:

Հ Ո Ւ Ն Գ Ա Ր Ի Ա

Հունգարական բուրժուազիան պարծենում և իր հազարամյա սահմանադրությունը: Սակայն այս սահմանադրությունը Հունգարիայի ամբողջ պատմության ընթացքում լուկ իբրև գործիք և ծառայել տիրապետող դասակարգերի ձեռքին՝ աշխատավոր մասսաներին չահագործելու և հարստահարելու համար:

Չնայած ընդհանուր դադարի ընտրական իրավունքի համար հունգարական պրոլետարիատի մղած բազմամյա պայքարին, ընդհուպ մինչև 1918 թվականի հեղափոխությունը քվեարկություն իրավունքը մնում էր ունեւոր դասակարգերի առավելությունը: Միայն պրոլետարիատի փառապանծ ղեկաւորւորայի ժամանակ, 1919 թվականին, իրականացվեց իսկական դեմոկրատիան և ազատությունը հունգարական աշխատավորների համար: Հաղթանակած հակահեղափոխությունը, սակայն, շուտով վոջնչացրեց ժողովրդի ազատությունը: Հեղափոխական պրոլետարիատի դըլխին տեսած արյունահեղ դատաստանից հետո «կարգը» վերականգնվեց հին սահմանադրության հիման վրա, վորը լրացվեց նոր, ֆաշիստական որենքներով:

«Պետական ու հասարակական կարգի ավելի եֆեկտիվ պաշտպանություն մասին» 1920 թվականին ընդունված որենքով կոմկուսակցությունն արգելվեց: Մամուլի, ժողովների ու միու-

թյունների ազատությունը սահմանափակվեց: Մտցված են դատարար պատիժներ թուղցիկներ տարածելու համար կամ կարմիր ոգնություն (ՄՈՊՐ) կազմակերպությունը մասնակցելու համար և նույնիսկ պարզապես հեղափոխական համոզմունքների համար:

Կարիք յեղած դեպքում հունգարական բուրժուազիան, առանց բաշվելու, դիմում և արտակարգ միջոցների: Այսպես, 1931 թվականի սեպտեմբերի 20-ին բուրժուազիայի խուճապը հեղափոխական շարժման աճման առաջ այն աստիճանին հասավ, վոր կառավարությունն արտակարգ դրություն հայտարարեց: Սրա հիման վրա 1932 թվականի հուլիսի 29-ին մահապատժի յենթարկվեցին 2 կոմունիստներ, պրոլետարական հեղափոխություն լավազույն մարտիկները, ընկերներ Ե. Ծալլայը և Ա. Ֆյուրստը:

Հահաճայն սահմանադրության՝ Հունգարիան թաղավորություն և: Բայց նկատի առնելով, վոր Տրիանոնի պայմանագիրն արգելեց մինչև հեղափոխությունը տիրապետող Հարսուրդների տան վերականգնումը, այլ և այն, վոր բուրժուազիայի տարբեր խմբերը չկարողացան իրար հետ համաձայնություն դալ թագավորի թեկնածուության շուրջը, Հունգարիան մնաց թաղավորություն՝ առանց թագավորի: «Թագավորի պարտականությունները» կատարում և կառավարիչ Սորտին, վորը 1920 թ. ընտրվել և Ազգային ժողովի կողմից անսահմանափակ ժամանակով:

Պատկամենուր բաղկացած և 2 պալատից՝ պատգամավորների պալատից և գերագույն պալատից: Վերջին անդամները չեն ընտրվում, այլ մասամբ նշանակվում են կառավարչի կողմից, մասամբ ջոկվում են արխտոկրատիայի միջից: Պատգամավորների պալատի անդամներն ընտրվում են 4 տարով: Սակայն ընտրական իրավունքը բնավ ընդհանուր չէ, հավասար չե ու միայն մասնակի կերպով դադարի յե: Չայնի իրավունք ունեն. 1) դրադետ տղամարդիկ, 24 տարեկան դարձած, հունգարական քաղաքացիներ, վորոնք ապրում են միևնույն տեղում 2 տարուց վոչ պակաս. 2) այն կանայք, վորոնք բացի վերև մատնանշած հատկանիշներից, նաև ավարտել են դպրոցի 6 դասարանից վոչ պակաս և ունեն վոչ պակաս, քան 3 յերեխա: Ըստվորում պասսիվ ընտրա-

¹ Տես «Спутник агитатора» № 9, 1936 թվ. էջ 8:

կան իրավունք¹ ունեն միայն այն կանայք, վորոնց ստորիքը 30-ից պակաս չէ:

Վիեարկությունը տեղի յե ունենում դադարի միայն Բուդապեշտում ու 6 մեծ քաղաքներում, այսինքն 245 ընտրական շրջաններին միայն 46-ում: Իսկ մնացած 199 շրջաններում այն տեղի յե ունենում բաց կերպով: Ընտրական շրջանները բաժանված են այնպես, վոր բանվորական շրջաններում մեկ պատգամավորի ընտրության համար պահանջվում է 2—3 անգամ ավելի ձայն, քան բուրժուական շրջաններում:

«Շուրջկարն սկսվում է»—այսպես ընտրույեց ընտրությունները Կոմս Բետրենը 1931 թվականին: Յեվ իրոք, Հունգարիայում նախընտրական կամպանիան ավելի շուտ նման է պաշարողական դրության, քան «դեմոկրատական» պետության սահմանադրական ակտի: Կեղծումները, կաշառումը, յերկյուղ տալը և արյունալի նոռորը կառավարություններին ու տեղական չինովնիկներին կողմից ուղեկցում են ամբողջ կամպանիային: Հունգարիայում ընտրություններն առանց արյունալի դժգոհի չեն լինում: Վերջին ընտրություններին Ենդրեդ գյուղում, վոստիկանության հետ բնակչության ունեցած ընդհարման ժամանակ, ժանդարմներին կողմից գնդակահարվեցին 8 հոգի և նրանց մեջ մի դեղջկուհի— 4 յերեխայի մայր, շատերը վիրավորվեցին:

Բնորոշ է, վոր նույնիսկ Փաշխտական դերադույն դատարանը ստիպված յեղավ վոչնչացնել վերջին ընտրություններին ստացված մանդատների ընդհանուր քանակի 9%-ը՝ ընտրությունների կանոնները խախտելու համար (խարեյություն, կեղծիքներ, կաշառք և այլն):

Հունգարական պառլամենտը վոչ այլ ինչ է, յեթե վոչ թղենու մի տերև, վորը ծածկում է կապիտալիստների ու կալվածատերերի դիկտատուրայի մերկությունը:

Ճ Ա Պ Ո Ն Ի Ա

Ճապոնիան ձևականորեն սահմանադրական միապետություն է: Սակայն փաստորեն ճապոնական միապետությունը հիմնականում պահպանել է իր արքայազն ընդթը: Ճապոնական սահմա-

¹ Պատիվ ընտրական իրավունք—ընտրվելու իրավունք, ակտիվ ընտրական իրավունք—ընտրելու իրավունք

Նադրությունն ընդունվել է 1889 թվականին: Այն կառուցված է 1850 թվականի պրուսական սահմանադրության տիպի համաձայն և կայսրին վերապահում է չափազանց լայն ու շատ քիչ սահմանափակ իշխանություն: Համաձայն այս սահմանադրության, «կայսրը պետության գլուխն է և ունի գերազույն իշխանություն»: Նրա «անձը սուրբ է և անձեռնմխելի»: Նա յե «հաստատում որենքները», նա յե «բաց անում ու փակում պառլամենտը և արձակում պատգամավորների պալատը», նա կարող է պառլամենտական արձակուրդներին ժամանակ «հրատարակել կայսերական հրամաններ, վորոնք որենքներին ուժ ունեն» և այլն: Բացի դրանից, ճապոնական կայսրը բանակի ու նավատորմի գերագույն հրամանատարն է, կարող է պատերազմ հայտարարել, պայմանագրեր կնքել: Նրան է պատկանում սահմանադրությունը փոփոխելու նախաձեռնության իրավունքը:

Կայսրի մերձավորագույն խորհրդակցական որդանն ամենաազդեցիկ պետական բարձր աստիճանավորներից կազմված գաղտնի խորհուրդն է, վորն իրավունք ունի «մեկնարանելու» սահմանագրությունն ու որենքները: Գաղտնի խորհուրդը, ինչպես նաև սահմանադրության մեջ չհիշատակված «գեներո»—1868 թվականի Մեյձի հեղաշրջման ակտիվ մասնակիցների (ներկայումս կենդանի յե մնացել միայն 92-ամյա Սայոնձին) խորհուրդն—ահագին քաջաբական դեր են խաղում ճապոնիայում: Կառավարությունը (մինիստրներին կարենետը) նշանակվում և արձակվում է կայսրի կողմից և պատասխանատվություն է կրում (ինչպես և յուրաքանչյուր առանձին մինիստր) միայն նրա առաջ: Ամենից ավելի արտոնյալ վիճակում են ռազմական և ծովային մինիստրները, վորոնք իրավունք ունեն անմիջականորեն ղեկուցելու կայսրին և վորոնք դրանով իսկ հնարավորություն են ստանում իրենց քաղաքականությունն անցկացնելու հաճախ առանց ճապոնական կառավարության գլխության, իսկ յերբեմն նաև անկախ նրանից: 1935 թվականին ճապոնական կառավարությունը պրեմյեր-մինիստրին կից ստեղծեց մի խորհրդակցական որդան, «մի խորհուրդ պետական քաղաքականության քննարկման համար», ուր մտան ամենաազդեցիկ պետական բարձրաստիճանավորները, ինչպես նաև Ֆի-

¹ Տե՛ս «Спутник агитатора» № 10, 1936 թիվ, էջ 12:

նանսական կոնցերնները ու քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչները: Այս խորհրդում ներկայացված են մոնոպոլիստական տրեստները (հանձին կոնցերնների ակամավոր ղեկավարներ Միցուլիի ու Միցուլբիսի), բանկերը, վերին պալատի կարևորագույն խմբավորումների լիդերներն ու պալատական-բյուրոկրատական շրջանների ներկայացուցիչները:

Ճապոնական պառլամենտը բաղկացած է յերկու պալատից՝ պերերի պալատից, վորը կազմված է արիստոկրատներից, կալվածատերերի դասից, խոշորագույն բուրժուազիայի ներկայացուցիչներից, և պատգամավորների պալատից, վորն ընտրվում է 4 տարով (պերերի պալատի լիազորությունների ժամանակամիջոցը 7 տարի յե): Պառլամենտի դերը չափազանց չնչին է, վորովհետև կառավարությունը նրա առաջ պատասխանատու չէ: Պառլամենտը փաստորեն չի վերահսկում նույնիսկ յերկրի Փինանաների վրա, վորովհետև բյուջեն կարող է անցկացվել առանց պառլամենտի սանկցիաների: Հիմնական կուսակցությունները պառլամենտում Սեյյուակայն ու Մինսեյտոն են, վորոնք հիմնականում ներկայացնում են յերկու խոշորագույն կոնցերնների (Միցուլիի ու Միցուլբիսի) շահերը:

Ճապոնիայի ընտրական սիստեմը չափազանց սահմանափակում է աշխատավորների լայն մասսաների մասնակցությունը նրանում: 1925 թվականից ընտրական իրավունքից զրկվում են 25 տարեկանից վեր տարիք ունեցող տղամարդիկ: Զինվորականները, ուսանողները, չինովնիկներն ու կանայք ընտրական իրավունքից չեն զրկվում: Ճապոնական պառլամենտի ընտրությունները միշտ ուղեկցվում են վոստիկանական դաժան բռնություններով ու տեռորով, ձայների գնումով, կաշառումներով և այլն:

Ճապոնական սահմանադրության մեջ ձևակերպված են բուրժուական բոլոր սահմանադրությունների համար ուղորակական կետեր բնակարանի անձեռնմխելիության, խոսքի, ժողովների և միությունների ազատության մասին: Այս բանն ամենևին չի խանգարում Ճապոնիայի կառավարող դասակարգերին արգելելու ժողովներն ու ցույցերը և մասսայական ձերբակալություններ, դաժան բռնություններ ու սպիտակ տեռոր կիրառել «վտանգավոր մտքերի» դեմ և այն բոլորի դեմ, ինչ վոր թեկուզ ամենաչնչին ակնարկ է պարունակում նույնիսկ լիբերալիզմի նկատմամբ:

Հենց նորերս ճապոնական մամուլում հաղորդագրություն յերևաց պառլամենտի քննարկմանը նախադիմացնելու՝ խստագույն դրսեքննություն հաստատելու մասին և բոլոր ռազիկալ և լիբերալ հրատարակություններն արգելելու մասին:

Այս բոլորը, ինչպես և պետական քաղաքականության քննարկման խորհրդի ստեղծումը, մի խորհուրդ, վորը փաստորեն հակադրվում է պառլամենտին, վկայում է ուժեղացրած տենդենցի մասին՝ հրաժարվելու բուրժուական պառլամենտարիզմի նույնիսկ այն պոչատ հիմնարկներից, վորոնք կային Ճապոնիայում:

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ

Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգների սահմանադրությունը ընդունվել է 1787 թվականի սեպտեմբերի 17-ին, այն բանից հետո, յերբ ԱՄՆ-ն անկախություն ձեռք բերին Անգլիայի նկատմամբ: Սահմանադրության մշակման համար հավաքված հատուկ կոնվենտը կազմված էր խոշորագույն վաճառականներից, հողային սպեկուլանտներից, վաչխառուներից և ստրկատերերից: Այս կոնվենտի 55 անդամների թվում չկար վոչ մի բանավոր, վոչ մի աշխատավոր Փերմեր կամ արհեստավոր: Սահմանադրության 5-րդ հոդվածը չափազանց բարդացնում է դժվարացնում է սահմանադրության մեջ վորևե ուղղում կամ փոփոխություն մտցնելը: Ուղղումը սահմանադրության մեջ կարող է մտցվել միմիայն բոլոր նահանգների յերկու յերրորդի կամ թե յերկու պալատների վոչ պակաս քան յերկու յերրորդի պահանջով: Այն ուժի մեջ է մտնում միայն առանձին նահանգների յերեք քառորդի կողմից ուստիֆիկացիայի (հաստատման) յենթարկվելուց հետո: Սահմանադրության 148-ամյա պուլություն ընթացքում նրա մեջ մտցված է 21 ուղղում: Առաջին տասն ուղղումները, վորոնք դիվանագիտական վերաբերում են անձի ազատության այսպես կոչված սահմանադրական յերաշխիքներին, ընդունվեցին մասսաների ճնշման տակ 1791 թվականին, սահմանադրության հաստատման պրոցեսի ընթացքում: Մնացած 11 ուղղումներից, վորոնք ընդունվել են վերջին 145 տարվա ընթացքում, հարկավոր է նշել ստրկության վերացման վերաբերյալ (1865 թ.), նեգրերին ընտրական իրավունքներ տալու վերաբերյալ (1870 թ.) ու կանանց ընտրական իրավունքներ տալու (1920 թ.) վերաբերյալ ուղղումը:

ԱՄՆ-ի պետական որդանների կառուցվածքը, գործադիր, որ-
բենսդիր և դատական իշխանութիւնի բաժանումը, ինչպէս նաև
նրա մեջ լրացումներ ու փոփոխութիւններ մտցնելու բարդացրած
յեղանակը, — ամերիկյան սահմանադրութիւնը դարձնում են
հլու գործիք ամերիկյան բուրժուազիայի ձեռքում:

Գործադիր իշխանութիւնը կենտրոնացած է նախագահի ձեռ-
քում, վորն ընտրվում է 4 տարով ու սրտասխանատու չի ԱՄՆ-ի
կոնգրեսի (պառլամենտի) առաջ: Նա հանդիսանում է յերկրի բո-
լոր ռազմական ուժերի գլուխը. նա ոժտված է որենսդիր պալատ-
ների կողմից ընդունված որինադժերի վրա «վետո»¹ դնելու իրա-
ւունք. նա յե նշանակում մինխտրներին (գերատեսչութիւննե-
րի քարտուղարներին), վորոնք յենթարկվում են միայն նրան. նա
յե ղեկավարում արտաքին քաղաքականութիւնը (ճիշտ է, սենա-
տի համաձայնութեամբ): Փաստորեն լինելով գործադիր իշխա-
նութիւնի գլուխ, նախագահը հզոր գործիք է հանդիսանում այն-
կուսակցական ու կապիտալիստական կլիկների ձեռքին, վորոնց
դրածուն է նա:

ԱՄՆ-ի իշխանութիւնի որենսդիր որդանը կոնգրեսն է, վորը
բաղկացած է յերկու պալատից՝ վերին պալատից կամ սենատից և
ստորին կամ ներկայացուցիչների պալատից: Սենատորներն ըն-
տրվում են 2 հոգի յուրաքանչյուր նահանգից (ընդամենը 48 նա-
հանգ կա) 6 տարով, ըստվորում 2 տարին մի անգամ ընտրվում է
սենատի մի յերրորդը. իսկ ներկայացուցիչները պալատի անդամ-
ներն ընտրվում են 2 տարին մեկ անգամ: Ներկայացուցիչների
պալատի գործունեութիւնը չափազանց սահմանափակված է, և
նրա դերն անհամեմատ ավելի պակաս զգալի յե, քան սենատի դե-
րը, վորովհետև ներկայացուցիչների պալատի կողմից առաջադր-
ված բոլոր որինադժերը կարող են հաստատութիւն համար նա-
խագահի մոտ գնալ միայն այն բանից հետո, յերբ նրանք հալա-
նութիւն են ստացել սենատի կողմից: Սենատն իրավունք
ունի նաև հաստատելու այն հիմնական նշանակումները, վորոնք
ստորագրվում են նախագահի կողմից, և ռատիֆիկացիայի յեն-
թարկելու (վավերացնելու) միջադպային պայմանագրերը: Գիծ
դեպքեր չեն յեղել, յերբ մասսաների ճնշման տակ ներկայացուցիչ-

¹ «վետո» գնել—նշանակում է արգելել կամ մերժել:

ների պալատում ընդունված վորոշումները մերժվել են սենատի
կամ նախագահի կողմից: Այս բոլորից պարզ է, վոր բանկային
ու բորսային շրջանները, այն սինդիկատներն ու տրեստները, վո-
րոնք սենատում մեծամասնութիւն ունեն, ըստ ելութիւնի հանդի-
սանում են յերկրի տնտեսական ու քաղաքական կյանքի տերերը:
Չուր չե, վոր ամերիկացիներն ասում են, թե ԱՄՆ-ում իշխանու-
թիւնը պատկանում է «յերրորդ պալատին», այսինքն բանկերին
և բորսային, վորոնք ուղղութիւն են տալիս յերկրի քաղաքակա-
նութիւնը: Կոնգրեսի ընտրութիւնները, ինչպէս նաև շատ որի-
նադժերի անցումը պալատներում, ուղեկցվում են ընտրողների ու
պատգամավորների կաշառումներով: Կաշառքների սխտեմն ուրիշ
վոչ մի բուրժուական հանրապետութիւնի մեջ այն լայն կիրառումը
չունի, ինչպէս ԱՄՆ-ում:

Բոլորովին առանձին ու բացառիկ դեր է խաղում գերագույն
պատարանը, վորը բաղկացած է նախագահի կողմից (սենատի հա-
վանութեամբ) ցմահ նշանակվող ինն անփոխելի դատավորներից
և իրականացնում է գերագույն վերահսկողութիւնն որենսդրա-
կան պալատների վրա: Համաձայն սահմանադրութիւնի, նրա իրա-
ւասութիւնը տարածվում է այն «բոլոր գործերի» վրա, վորոնք
վերաբերում են «իրավունքին և արդարութիւնը», որենքներին,
պայմանագրերին, նահանգների ու առանձին քաղաքացիների մի-
ջև ծագող կոնֆլիկտներին և այլն: Այսպիսի անորոշ ձևակեր-
պումները հնարավորութիւն տվին գերագույն դատարանին սահ-
մանադրութիւնի մեջ չհիշատակված իրավունք վերադասել իրեն
այս կամ այն որենքը հայտարարելու սահմանադրութիւնը հակա-
սող և վերացնելու այն: Այսպիսով, խոշոր բուրժուազիան միշտ
հնարավորութիւն ունի ոգտագործել գերագույն դատարանն իր
չահերի համար և նրա միջոցով սահմանադրութիւնը հարմարեց-
նել մոնոպոլիստական կապիտալի պահանջմունքների համեմատ:
Գերագույն դատարանը սխտեմատիկորեն վոչ-սահմանադրական
և բացառաբարում ամեն մի որենք յեկամտային հարկի մասին,
առողջապահութիւնի մասին, կանանց ու յերեխաների համար նվա-
զագույն աշխատավարձ սահմանելու մասին, մի քանի նահանգ-
ներում ընդունված որենքները յերեխաների աշխատանքի շահա-
զործումը սահմանափակելու մասին: Դրա փոխարեն նա սխտե-
մատիկորեն հաստատում էր առանձին նահանգների ստորին դա-

տական ինստանցիաների վորոշումներն արհմիությունների դործունեությունը սահմանափակելու մասին. նա վերացրեց 1933 թվականին կոնգրեսի միջոցով անցած որևէ ի հաշիվ յերկաթուղային ընկերությունների և այլնի յերկաթուղային բանվորների ու ծառայողների համար կենսաթոշակներ նշանակելու մասին: Գերագույն դատարանը վերջին ժամանակներս հանդես յեկավ ընդդեմ Ռուզվելտի քաղաքականության, ընդդեմ նրա «նոր դարագլխի», վերացնելով հայտնի « NIRA »-ն (վերականգնման ազգային ադմինիստրացիան) ու « AAA »-ն (գյուղատնտեսության վերականգնման ադմինիստրացիան):

Ամերիկյան կոմկուսակցությունն, իբրև միասնական ճակատի ծրագրի կետերից մեկը, պահանջ է առաջ մղում՝ գերագույն դատարանին զրկել որենքները վոչ-սահմանադրական հայտարարելու իրավունքից:

ԱՄՆ-ի 48 նահանգներից յուրաքանչյուրի մեջ կա սեփական յերկալալատանի լեգիտատուրա (որենդրական որգան) — սենատն ու ներկայացուցիչները պալատը, այլ և իր սեփական վարչական ու գատական ապարատ: Սրանով է բացատրվում որենդրության մեծ բաղմադանությունն առանձին նահանգներում: Ընտրությունների սխտեմն ու կաշառքները լայն պրակտիկան նույնն են, ինչ վոր ընդհանուր պետական ապարատում:

Թեպետ կանանց ընտրական իրավունքներ տալու մասին 1920 թվականին սահմանադրությունը կցած ուղղումն ընդունելով ԱՄՆ-ում ընդհանուր ընտրական իրավունքը ձևակերպեցին դոյություն ունի, սակայն ԱՄՆ-ի բնակչության շատ նշանակալի մասունքը զրկված են այս իրավունքից: Ընտրություններից հեռացված են հարյուր հազարավոր ներգաղթողներ, վորոնք ԱՄՆ-ի քաղաքացիներ չեն, այլև նեղր բնակչության հիմնական մասան՝ հարավային նեղրական նահանգներում:

ԱՄՆ-ի տասներկու միլիոնանոց նեղր բնակչության յերկու յերրորդն ապրում է հարավային նահանգներում: Նեղրերի մեծամասնության համար դեռ 1865 և 1870-ական թվականներին ընդունված և սահմանադրությանը կցած ուղղումներն ստրկության վերացման և նրանց ձայնի իրավունք տալու մասին՝ մնացել են լուկ իբրև մի գատարկ գեկլարացիա, վորը շատ քիչ է փոխել նրանց զրույթյունն ու քաղաքական իրավունքները: Դեռ մինչև

որս հարավում չափազանց տարածված է նեղրերի նկատմամբ կիրառվող ինքնադատաստանների («Լինչի դատաստանների») սխտեմը: 1885 թվականից սկսած Լինչի այս դատաստաններին յենթարկվել է ավելի քան 3300 նեղր: Սպառնալիքների, բռնությունների և ընտրական կամպանիաների ժամանակ հարավային նահանգներում տիրող տեռորի հետևանքով, այլ և այն պատճառով, վոր նեղրերի նշանակալի մասը լինելով անդրագետ՝ չի կարող տալ ընտրություններին մասնակցելու համար ԱՄՆ-ի որենքներով սահմանված պարտադիր քննությունները և իր չափազանց աղքատության պատճառով չի կարող հատուկ ընտրական հարկ մուծել, — նեղրերի մեծ մասը փաստորեն զրկված է ընտրական իրավունքներից: 6,5 միլիոն նեղրերից, վորոնք ըստ 1930 թվականի ցուցակադրության ոգտվում էյին ընտրական իրավունքից, փաստորեն ոգտվել է միայն նրանց 3%-ը: Ընտրական իրավունքից փաստորեն չեն ոգտվում գործադուրկների ահադին մասսաները, վորոնք ալխատանք գտնելու համար թափառում են նահանգից նահանգ:

Ընտրությունները ամբողջ սխտեմը և այս կամպանիան անցկացնելու մեթոդներն այնպես են, վոր ընտրված են դուրս գալիս խոշոր բուրժուազիայի այս կամ այն խմբավորման դրածուները:

Ընտրական կամպանիան պահանջում է ահադին ծախսեր պրուպագանդի, ռադիոյի, լրագրերի, հատուկ պրակատների ու թուրյիկների համար, շենքերի համար և այլն: Պրոֆ. Միլիամի հաշվելով բուրժուազիայի յերկու տիրապետող կուսակցություններից յուրաքանչյուրը (հանրապետական ու դեմոկրատական) նախագահական ընտրությունների վրա ծախսում է մոտավորապես 10 միլ. դոլլար: Այս միջոցները հասկացվում են խոշոր տրեսաների, բանկերի կամ առանձին միլիարդերների կողմից: Յերկու տիրապետող բուրժուական կուսակցությունները սերտ միահյուսումը պետական ապարատի հետ և այս կուսակցությունների ունեցած հնարավորությունը՝ վերահսկելու ընտրական պրոցեդուրայի վրա առանձին նահանգներում՝ չափազանց զժվարացնում են ինքնուրույն թեկնածույթյուններ առաջադրելու կամ նոր կուսակցություն կազմելու գործը:

Առաջին, 1791 թվականին ընդունված և սահմանադրությանը կցված ուղղումը սահմանում է, վոր կոնգրեսը չի հրատարակելու

որենքներ, վորոնք սահմանափակում են խոսքի կամ մամուլի ազատութիւնը, կամ «ժողովրդի իրավունքը՝ խաղաղ հավաքվելու ու պետիցիաներով կառավարութեանը դիմելու», իսկ 4-րդ ուղղումն ապահովում է անձի ազատութեան յերաշխիքները, բնակարանների անձեռնմխելիութիւնը և այլն: Այս բանն ամենևին չխանգարեց 1919 թվականից մի շարք արտակարգ որենքներ մտցնելու, վորոնք սահմանափակում են քաղաքացիական ազատութիւնները և ուղղված են հեղափոխական շարժման դեմ (առաջին հերթին կոմունիստական կուսակցութեան դեմ): Այս որենքներին է վերաբերում այսպէս կոչված «հանցավոր սինդիկալիզմի» մասին յեղած որենքը, «սաղբանքի» մասին, «հանցավոր անարխիստի» մասին յեղած որենքը և այլն: Մի շարք նահանգներում որենքներ են ընդունվել հասարակական վայրում կարմիր դրոշակ կախելն արգելելու մասին, սահմանադրութեանը և յերկրին հավատարիմ մնալու համար մանկավարժների կողմից յերդմելու անհրաժեշտութեան մասին: Մի քանի նահանգներում քննարկելու համար որինազծեր են մտցվել ընտրութիւնները ժամանակ կոմկուսակցութեանն իր թեկնածուները ղնելու իրավունքից զրկելու մասին: Բացի դրանից սենատի հանձնաժողովները մեջ դարձել մի շարք առաջարկներ են մտցվել հեղափոխական շարժման և կոմունիստական կուսակցութեան դեմ: Թեպէտ ԱՄՆ-ում կոմունիստական կուսակցութիւնը լեզալ կերպով գոյութիւն ունի, բայց վերջին տարիները զգալի կերպով հաճախակի յեն դարձել նրա կազմակերպութիւնների շենքերի վրա հարձակվելու դեպքերը, ինչպէս և բանտարկութիւններն ու հարածանքները հեղափոխական գործունեութեան համար:

ԱՄՆ-ում ներկայումս գոյութիւն ունեն գանազան Փաշիստական և Փաշիստական տիպի ռեակցիոն շատ կազմակերպութիւններ: Նրանցից շատերը հանդես են գալիս «ազատութեան լիզայի», «հանրապետութեան պահպանի» և այլ հայրենասիրական անուններով: Նորերս Միչիգան նահանգում տեղից ֆաշիստական «սև լեզերն» կազմակերպութիւնը: Այս բոլոր կազմակերպութիւնները «սահմանադրութեան և յերկրի պաշտպանութեան» դրոշակի տակ իրենց նպատակ են դնում պայքարել հեղափոխական շարժման դեմ, կոմունիստական կուսակցութեան դեմ: Ընտրութիւնների ժամանակ նրանք ել շատ ակտիվ դեր են խաղում, ընտրողներին տեղորի յենթարկելով:

Ա Ն Գ Լ Ի Ա

Մեծ Բրիտանիան սահմանադրական միապետութիւն է: Նրա սահմանադրութիւնն աշխարհի ամենահին սահմանադրութիւններից մեկն է և տրվել է Յոան Անհողի կողմից դեռ XIII դարում: Փաստորեն Անգլիան չունի ամբողջական զրկած սահմանադրութիւն: Նրա պառլամենտը հիմնվեց 1215 թվականին ազատութիւնների այսպէս կոչված Մեծ խարտիայի հիման վրա (մանրամասնութիւնները տե՛ս Стоварі архаїчнаго) : Անգլիական սահմանադրութիւնը ներկայացնում է մի զուգակցում մի շարք որենադրական ակտերի ու տրադիցիաների, վորոնք կազմավորվել են կառավարման պրակտիկայում:

Անգլիական պառլամենտը դասակարգային-ներկայացուցչական հիմնարկ է և բաղկացած է յերկու պալատից՝ լորդերի պալատից և համայնքների պալատից: Լորդերի պալատի մեջ են մտնում արիստոկրատական տոհմերի ներկայացուցիչները՝ ժառանգական իրավունքի հիման վրա: Թագավորն իրավունք ունի ուզած թվով լորդերի պալատի նոր անդամներ նշանակել՝ նրանց լորդերի (պերերի) կոչման բարձրացնելու միջոցով: Լորդերի պալատի մեջ են մտնում նաև շոտլանդական և հյուսիս-իռլանդական պերերի ներկայացուցիչները, այլ և դատական ու «հոգևոր» լորդերը: Վերին պալատի իրավունքները սահմանափակված են: Ֆինանսական այն որինազծերը, վորոնք անցել են համայնքների պալատում, կարող են որենքի ուժ ստանալ, թեկուզ լորդերի պալատը նրանք ընդունած ել չլինի: Բացի դրանից, ամեն մի որինազիծ, յերիցս (յերեք հաջորդական սեսիաներում) ընդունված համայնքների պալատի կողմից, կարող է որենքի ուժ ստանալ, չնայած նրա յեռակի մերժմանը լորդերի պալատի կողմից:

Համաձայն սահմանադրութեան, անգլիական թագավորն իրավունք ունի «վետո» դնել ամեն մի որենքի վրա, վոր հաստատված է պառլամենտի յերկու պալատների կողմից: Սակայն «վետո»-յի այս իրավունքն արդեն ավելի քան 200 տարի յե, ինչ փաստորեն գոյութիւն չունի: Թագավորի՝ պատերազմ հայտարարելու, հաշտութիւն կնքելու, համայնքների պալատի վաղաժամ արձակման տութիւն կնքելու, համայնքների պալատի վաղաժամ արձակման և այլնի բացառիկ իրավունքը նույնպէս վաղուց իվեր ձևական է:

դարձել և փաստորեն իրականացվում է մինիստրների կաբինետի կողմից, վորտեղ ներկայացված է համայնքների պալատի մեծամասնությունը:

Համայնքների պալատի անդամներն ընտրվում են բնակչության կողմից, վորի համար յերկիրը բաժանված է վորոշ թիվով ընտրական մասերի: Համայնքների պալատը ստատգամավորներ ուղարկելու իրավունք ունեն նաև մի քանի համալսարաններ: Թեկնածու առաջադրելու ժամանակ անհրաժեշտ է դրավական մուծել 150 Ֆունտ ստերլինգի¹ չափ, վորը չի վերադարձվում, յեթե թեկնածուն ստացել է բոլոր արված ձայների $\frac{1}{8}$ -ից պակաս: Ընտրական իրավունքից ուղտվում են յերկու սեռի 24 տարեկան դարձած անձեր, վորոնք ունեն «նատակեցություն», այսինքն ունեն անչարժ գույք կամ բնակարան կամ այլ շենք են վարձում տարեկան վոչ պակաս քան 10 Ֆ. ստ. վճարով:

Ներկայումս գործող համայնքների պալատի սոցիալական կազմը շատ ցուցադրական է: Պալատի 615 պատգամավորից 104-ն արդյունաբերողներ են, 68-ը Ֆինանսիստներ, 56-ն առևտրականներ, 60-ը հողատերեր, 99-ը փաստաբաններ, 32-ը չինովնիկներ, 55-ը ժուռնալիստներ, բժիշկներ և այլն, 30-ն արձմիտեկանական չինովնիկներ, 5-ը նախկին բանվորներ:

Անգլիայում փաստական իշխանությունն իրականացնում է մինիստրների կաբինետը: Նրան ջոկում է այն կուսակցությունը, վորը մեծամասնություն ունի պալատում: Կաբինետն ունի ահագին իշխանություն ու գործողությունների մեծ ազատություն: Համայնքների պալատը քննարկում է համարյա բացառապես միայն այն միջոցառումները, վորոնք մտցվում են կառավարությունից, և միայն այն ժամանակամիջոցի ընթացքում, վորը վաղորդ հաստատվում է կառավարության կողմից: Արտասպառամենտական որենսդրության նշանակությունը շարունակ աճում է: Այն իրականացվում է մինիստրների կաբինետի կողմից կամ առանձին մինիստրությունների կողմից: Պառլամենտն ե՛լ առավել փոխարկվում է որենսդրության գրանցման մեքենայի:

Պառլամենտական սխտեմի հետ կողք-կողքի գոյություն ունի բունությունն ապարատ հանձին դատարանի ու կառավարման որդանների, վորոնք իրենց մեջ Ֆեոդալական ու կիսաֆեոդալական

բիչ մնացորդներ չեն պարունակում: Անգլիական դատավորներն անփոխելի յեն, իսկ այս նրանց հնարավորություն է տալիս ամենաուեակցիոն դատական վորոշումներ հանելու: Անգլիայում պետական ասարատի ամենաբարձր պոստերը գրավում են գլխավորապես անգլիական արիստոկրատական տոհմերի կրտսեր անդամները, վորոնք, անգլիական որենքներով, չեն ժառանգում հայրական տիտղոսներն ու կալվածքները և սովորաբար իրենց համար պետք է ընտրեն կամ հողեր կամ վարչական ասպարեզ:

Վերջին տարիներն ավելի ու ավելի հաճախ են կարծիքներ արտահայտվում անգլիական սահմանադրության ռեֆորմի անհրաժեշտություն մասին: Ցաշիստները պահանջում են պառլամենտի կատարյալ վերացումը: Ռեֆորմի նախադեքը վերջին հաշվով հանգում են վոչ թե համայնքների պալատի իշխանությունն ամրապնդմանը, այլ նրա թուլացմանը:

Հետպատերազմյան տարիները մեծ փոփոխություններ մտցրին անգլիական սահմանադրության մեջ: Այսպես, որինակ, Անգլիայում գոյություն ունի թատրոնի ու կինոյի գրաքննությունը, որենք «գորքերի մեջ տեղի ունեցող հուզումների» մասին (ընդունված 1934 թվականին) և այլն, վորը փաստորեն խիստ սահմանափակում է խոսքի ու մամուլի ազատությունը:

Անգլիական բազմաթիվ դաղությունների ու դոմինիոնների բնակչությունը չի մասնակցում անգլիական պառլամենտի ընտրություններին, վորի հետևանքով անգլիական պառլամենտը, վորի առաջ պատասխանատու յե ամբողջ Բրիտանական կայսրության կառավարությունը, փաստորեն ընտրվում է կայսրության բնակչություն այն փոքր մասի կողմից, վորն ապրում է բուն Անգլիայում:



Թոսելով բուրժուական դեմոկրատիայի մասին, Լենինը մատնանչում եր. «Բուրժուական դեմոկրատիան լինելով մեծ պատմական պրոգրես միջնադարի համեմատությունը՝ միշտ մնում է կապիտալիզմի ժամանակ չի կարող չմնալ—նեղ, կրճատ, կեղծ, յերկերեսանի, դրախտ հարուստների համար, թակարդ ու խաբե-

¹ Մի ֆունտ ստերլինգը Պետանկի ներկա կուրսով հավասար է 25 ռուբլ:

յուլթյուն չահագործվողների համար, աղքատների համար» (Լենին, 4. XXIII, էջ 346) :

Լենինը գրում էր. «Պրոլետարական ղեմոկրատիան միլիոն անգամ ավելի ղեմոկրատական է բուրժուական ամեն մի ղեմոկրատիայից. խորհրդային իշխանութունը միլիոն անգամ ավելի ղեմոկրատական է բուրժուական ամենաղեմոկրատիկ հանրապետութունից» : (Լենին, 4. XXIII, էջ 350) :

Մենք տեսնում ենք, վոր բուրժուական ղեմոկրատիայի յերկիրներում սահմանադրական իրավունքները, ղեմոկրատական ազատութունները գոյութուն ունեն միայն ձևականորեն, թղթի վրա, փաստորեն ապահովելով մոնոպոլիստական կապիտալի անբաժան սիրապետութունը : Այնինչ բուրժուազիայի ամենից ավելի ռեակցիոն խմբավորումները վրաքի յեն յեյնում մինչև անգամ այս ղեմոկրատական ազատութունների դեմ, ձգտում են պետութունը Փաշիզացնել, բուրժուական ղեմոկրատիան փոխարինել բացահայտ Փաշիստական ղեկատառությամբ : Պրոլետարիատի համար, աշխատավոր մասսաների համար ընավ մեկ չէ, թե ինչպիսի ձևերով է զգեստավորվում բուրժուազիայի տիրապետութունը :

Այն իրազրության մեջ, յերբ բուրժուազիան ե՛լ ավելի հստակորեն է կուրս բռնում ղեպի Փաշիզացումը, պեսլի բացահայտ տեռորիստական ղեկատառության անցումը, ղեմոկրատական ազատութունները պաշտպանելու պահանջը հանդիսանում է միասնական պրոլետարական և լայն ժողովրդական Ֆրոնտի մարտական պահանջներից մեկը կապիտալի յերկիրներում : Ընկ. Դիմիտրովը կոմիստերնի VII կոնգրեսում ասում էր .

«Մենք, կոմունիստներս, անհողողը կողմնակիցներ ենք հանդիսանում խորհրդային ղեմոկրատիայի, վորի մեծ փորձը տվեց պրոլետարական ղեկատառության խորհրդային Միության մեջ, վորտեղ այն պահին, յերբ կապիտալիստական յերկիրներում վերացվում են բուրժուական ղեմոկրատիայի վերջին մնացորդները, — խորհուրդների VII համագումարի վորոշմամբ ազդարարվում է հավասար, ուղղակի և փակ ընտրությունների մուծումը : Սորհրդային այս ղեմոկրատիան ծրագրում է պրոլետարական հեղափոխության հաղթանակը, արտադրության միջոցների մասնավոր սեփականության վերածումը հանրային սեփականության, ժողովրդի ճնշող մեծամասնության անցումը սոցիալիզմի ուղին :

Այդ ղեմոկրատիան իրենից ավարտված ձև չի ներկայացնում, նա պարզանում է և զարգանալու յե սոցիալիստական յինարարության հետագա հաջողութունների, անդաստիարգ հատարակության ստեղծման և եկոնոմիկայում ու մարդկանց գիտակցության մեջ կապիտալիզմի մնացորդների հաղթահարման համեմատ :

Բայց այսոր միլիոնավոր աշխատավորներ, վորոնք ապրում են կապիտալիզմի պայմաններում, ստիպված են լինում վորոչեղ իրենց վերաբերմունքն այն ձևերի նկատմամբ, վոր ընդունում է բուրժուազիայի տիրապետութունը տարբեր յերկիրներում : Մենք անարխիստներ չենք և մեզ համար ամենևին միևնույն չէ, թե ինչպիսի՛ քաղաքական ուժիմ գոյութուն ունի տվյալ յերկրում — բուրժուական ղեկատառության բուրժուական ղեմոկրատիայի ձևով, թեկուզ ամենախուզված ղեմոկրատական իրավունքներով ու ազատութուններով, թե՞ բուրժուական ղեկատառության իր բացահայտ, Փաշիստական ձևով : Սորհրդային ղեմոկրատիայի կողմնակիցը հանդիսանալով, մեմք կպաշտպանեմք յուրաքանչյուր քիզն այն դեմոկրատական նվաճումների, վոր բանվոր դասակարգը կորգի է տարիների համառ պայքարով, և վնականորեն կկոպենք նրանց ընդարձակման համար :

Ինչքա՞ն դո՛հեր տվեց Անգլիայի բանվոր դասակարգը, մինչև վոր կարողացավ ձեռք բերել դործադուլների, իր արեղ-յունիոնների լեզալ գոյության, ժողովների, մամուլի ազատության, ընտրական իրավունքների ընդարձակման և այլ իրավունքները : Քանի՛ տասնյակ հազար բանվորներ իրենց կյանքը տվին Ֆրանսիայում հեղափոխական մարտերում XIX դարում, վորպեսզի ձեռք բերեն տարրական իրավունքներ և չահագործողների դեմ պայքարելու համար իրենց ուժերը կազմակերպելու լեզալ հնարավորություններ : Բոլոր յերկիրներում պրոլետարիատը շատ է արյուն թափել բուրժուա-ղեմոկրատական ազատություններ նվաճելու համար և, հասկանալի յե, վոր նա բոլոր ուժերով կպայքարի նրանք պահպանելու համար»¹ :

¹ Գ. Դիմիտրով — Փաշիզմի հորձակումը և կոմունիստական Իստերնացիոնալի ինդիքները Փաշիզմի դեմ բանվոր դասակարգի միասնության համար ժողովրդայնաբանում (Չեկոսլովակիայի յեղափոխական խոսք կոմունիստական Իստերնացիոնալի համաշխարհային VII կոնգրեսում 1935 թ. ոգոստոսի 2-ին) : ՀԿ(Ը)Կ ԿԿ հրատարակչութուն, 1935 թ., էջ 151—152 :

ԱՅՆ, ԻՆՉԸ ԿԱ, ԻՆՉՆ ԱՐԴԵՆ ՆՎԱՋՎԱԾ Ե

(ԹՎԻՆ ԵՎ ՓԱՍՏԵՐ ԳՐ ՍՈՒՄԱՆԱԳՐՈՒՄԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ԵՂՈՒՔԱԿԱՆ ԻՐԱՎՈՆՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ)

«ԽՍՀՄ-ի տնտեսական հիմքն են կազմում տնտեսության սոցիալիստական սխեմայի յեվ արտադրության գործիքների ու միջոցների սոցիալիստական սեփականությունը, վերոնից հաստատվել են տնտեսության կապիտալիստական սխեմայի լիկվիդացիայի, արտադրության գործիքների ու միջոցների մասնավոր սեփականության վերացման յեվ մարդու կողմից մարդու շահագործումը վոչնչացնելու հետեվանեով» (Նոր Սահմանադրության նախագծի 4-րդ հոդվածը):

Պրոլետարական դեկտատուրայի տարիներին արմատական փոփոխություն են տեղի ունեցել բնակչության սոցիալական ստրուկտուրայի մեջ: Դեռ 1934 թվականի նախորդական բնակչության կազմի մեջ բուրժուազիայի (կալվածատերեր, քաղաքային խոշոր և մանր բուրժուազիա, առևտրականներ և կուլակներ) տեսակարար կշիռը համարյա զերոյի հավասարվեց: Մյուս կողմից նըշանակելի չափով աճեց բանվոր գոտակարգի տեսակարար կշիռը, իսկ գյուղացիությունը ճնշող մեծամասնությունը դարձավ կոլտնտեսային:

Բերվող աղյուսակը ցույց է աալիս մեր յերկրի սոցիալական ստրուկտուրայի այդ արմատական փոփոխությունների ընթացքը:

%-ներով առ ամբողջ բնակչությունը
1913 թ. 1928 թ. 1934 թ.
առ 1/1

Բանվորներ, ինժեներա - տեխնիկական աշխատողներ և այլ բանվ. բնակչություն	16,7	17,3	28,1
Կոլտնտեսականներ և կոոպերացված տնայնագործներ ու արհեստավորներ	չկալին	2,9	45,9
Գյուղացի մենատնտեսներ (առանց կուլակների) և չկոոպերացված աշխատավոր տնայնագործներ ու արհեստավորներ	65,1	72,9	22,5
Բուրժուազիա (կալվածատերեր, խոշոր և մանր բուրժուազիա, առևտրականներ և կուլակներ)	15,9	4,5	0,1
Այդ թվում կուլակներ	12,3	3,7	0,09
Մնացած բնակչությունը (սովորական, բանակը, թոշակաուունները և ուրիշները)	2,3	2,4	3,4

Ոգտվելով այդ թվերից, պետք է նկատի ունենալ, վոր հաջորդ տարիներին հետագա խոշոր տեղաշարժեր տեղի ունեցան սոցիալական ստրուկտուրայի փոփոխության մեջ: Այդ յերևում է թեկուզ և այն բանից, վոր գյուղացիական տնտեսությունների կոլեկտիվացումը, վորն առ 1-ն հունվարի 1934 թ. 68,9 % էր, առ 1-ն ապրիլի 1936 թ. հասավ 89 %-ի: Հարկավոր է հիշել, վոր միայն 9 տարի առաջ, 1927 թվականին կոլտնտեսություններն իրենց ընդգըրկած տնտեսությունների թվով գյուղացիական բոլոր տնտեսությունների 0,8

տոկոսն էլին կազմում, իսկ ըստ ցանքատարածության՝ ամբողջ ցանքատարածության 0,7 %-ը:

Այժմ արդեն կոլտնտեսություններում են գտնվում գյուղացիական տնտեսությունների մոտ 90%-ը, իսկ ինչ վերաբերում է ցանքատարածությանը, ապա դրա միայն 3%-ն է գտնվում անհատական մասնավոր տնտեսությունների ձեռքին: Կուլակությունը վորպես դասակարգ վերացված է:

Ազիտատորը պետք է հիշեցնի մեր հաջող պայքարի ընթացքը շահագործող դասակարգերի դեմ, արդյունաբերությունից, առևտրից և ժողովրդական ամբողջ տնտեսությունից մասնավոր կապիտալի արտամղման պրոցեսը:

1923—24 թ.թ. մանր կապիտալիստները և կապիտալիստիկների մասնավոր առևտուրն իր կշռով կազմում էր 57,7%-ը: Այստեղ էլ վճռողական լծակները պրոլետարական պետության ձեռքին էլին, սակայն ամբողջ ապրանքաշրջանառության 57,7%-ն այն ժամանակ գտնվում էր մասնավոր կապիտալիստների և կապիտալիստիկների ձեռքին: 1924—25 թվականներին մասնավոր առևտրի կշիռը նվազեց մինչև 42,5%-ի: 1925—26 թվականներին մասնավոր առևտրի ծավալը կազմում էր 42,3%-ը: 1926—27 թվականներին նա իջավ մինչև 36,9%-ի: 1928 թվին նա արդեն կազմում էր 22,5%, 1929 թվին—13,5%, իսկ 1930 թ.—միայն 5,6%: Այսպես քայլ առ քայլ տեղի յեր ունենում կապիտալիստական տարրերի արտամղումն առևտրից:

Մասնավոր արդյունաբերությունն ամբողջ արդյունաբերության համախառն արտադրանքի մեջ 1923—24 թվականներին կազմում էր 23,7%-ը, 1924—25 թվականներին—19, 1926—27 թվականներին—14, 1927—28 թ.—13,1, 1929 թ.—10,5, 1930 թ.—5,6, 1932 թ.—0,5, 1933 թ.—0,45, 1934 թ.—0,33%:

Ներկայումս կապիտալիստական տարրերը վերջնականապես արտամղված են թե արդյունաբերությունից և թե առևտրից:

Տնտեսության սոցիալիստական ձեվերն անբաժմունքն իշխող դարձան ԽՍՀՄ-ի ժողովրդական ամբողջ տնտեսության մեջ:

Արտադրական հիմնական ֆոնդերի կազմի փոփոխությունն ըստ սոցիալական սեկտորների (1933 թվի անփոփոխ գներով) յերևում է հետևյալ տվյալներէց:

	1925 թ.	1934 թ.		
	միլ. ո. գումարի %-ը	միլ. ո. գումարի %-ը		
Սոցիալիստական տնտեսություն	22678	48,8	90344	95,81
Կապիտալիստական սեկտոր	3037	6,5	83	0,09
Մասնավոր մանր տնտեսութ.	20790	44,7	3867	4,10
Գումարը	46505	100,0	94294	100,0

Ժողովրդական յեկամտի մեջ տնտեսության սոցիալիստական ձևերն աճում են այսպես.

	1926 թ.	1935 թ.	1936 թ.
	(պլանը)		

ԽՍՀՄ-ի ժողովրդական յեկամուսը (1926—27 թվերի անփոփոխ գներով, միլիարդ ուրբլիներով)	21,7	65,7	83,1
Սոցիալիստական ձևերի տեսակարար կշիռը (%-ներով)	40,0	97,8	98,5

Գյուղատնտեսության կուլիկուլացման յեղ ինքուստրացման արագ անը, կու-
տնտեսային կարգի հաղթանակը յերևում են հետևյալ տվյալներին:

	1928 թ.	1935 թ.	1936 թ.
Գյուղացիական տնտեսութունները կու- լիկուլացման 0/0-ը	1,7	82,8	89(առ 1-ն ապրիլի)
Կոլտնտեսային սեկտորի ցանքատարա- ծութունը միլիոն հեկտարներով	1,4	108,9	—
Կոլտնտեսային - գյուղացիական սեկտորի ցանքատարածության 0/0-ը	1,2	94,1	—
Մեքենատրակտորային կայանները թի- վը (տարեվերջին)	չկային	4376	4951(պլանը)
ՄՏԿ-ների սպասարկած կոլտնտեսու- թյունների ցանքատարածության 0/0-ն առ բոլոր կոլտնտեսութունների ամ- բողջ ցանքատարածութունը	—	73	80 »
Գյուղատնտեսության տրակտորային պարկը (հազար ձիու ուժերով, տարեվեր- ջին)	278,1	6543	8476 »
Կոմբայնների պարկը գյուղատնտեսու- թյան մեջ (հազար հատով, տարեվերջին)	չկային	52	113 »

* * *

«Աշխատանքի իրավունքն ապահովվում է ժողովրդական տնտեսության
սոցիալիստական կազմակերպմամբ, խորհրդային հասարակության արտա-
դրողական ուժերի անշեղ ամամբ, տնտեսական ճգնաժամերի բացակայու-
թյամբ յեղ գործազրկության վերացմամբ: (Նոր Մահմանադրության 18-րդ
հոդվածից):

Ժողովրդական տնտեսության սոցիալիստական կազմակերպումն ապա-
հովեց արդյունաբերության արտադրանքի տարեցտարի աճման աշխարհում
չտեսնված տեմպ և տնտեսության անճգնաժամային զարգացումը: Այդ յերևում
է հետևյալ թվերին:

Խոշոր արդյունաբերության անման տեմպը (այն ճյուղերով, վարոնը հաշ-
վառվում էին 1913 թվին):

Տարիներ	Համախառն արտադրանքը (միլիոն ռուբլիներով 1926—27 թ. գներով)	Արտադրանքի աճման անե- պը (տոկոսներով նախորդ տարվա համեմատությամբ)
1913	10251	—
1924	4660	116,4
1925	7739	166,1
1926	11083	143,2
1927	12679	114,4
1928	15818	124,8
1929	19923	125,9
1930	25837	129,7

Տարիներ	Համախառն արտադրանքը (միլիոն ռուբլիներով, 1926—27 թ. գներով)	Արտադրանքի աճման անե- պը (տոկոսներով նախորդ տարվա համեմատությամբ)
1931	32263	124,9
1932	36878	114,3
1933	39934	108,3
1934	48200	120,7
1935	58800	122,0

1936 թ. պլանով, վորը հաջողությամբ զերակատարվում է, խոշոր ար-
դյունաբերությունը պետք է աճի 24,40/0-ով:

Գյուղատնտեսական կարեվորագույն մեքենաների համախառն հավաքը կազ-
մում է (միլիոն ցենտներով):

	1924	1934	1935	1936 (պլանը)
Հացահատիկներ	514	894	920	1048
Բամբակ-հումք	3,4	11,8	17,0	19,3
Շաքարի ճակնդեղ	34,9	113,6	162,1	254,2

Դեռ առաջին հնգամյակի ժամանակաշրջանում ԽՍՀՄ-ում գործազրկու-
թյունն ամբողջությամբ է վերջնականապես վերացվեց, այն ժամանակ, յերբ
դեռ 1927—1928 թվերին մեզ մոտ 1,3 միլիոն գործազուրկ կար:

ԽՍՀՄ-ի բանվորների և ծառայողների թիվն աճում է այսպես.

1924 թ.	—8,5 միլիոն հոգի
1934 թ.	—23,7 » »
1935 թ.	—24,7 » »
1936 թ. (պլանով)	—25,7 » »

* * *

«Հանգստի իրավունքն ապահովվում է բանվորների ճնշող մեծամաս-
նության համար աշխատող կրեատիվ - հասցնելով 7 ժամի, բանվորների
ու ծառայողների համար սահմանելով տարեկան արձակուրդ, վորի ընթաց-
քում պահպանվում է նրանց աշխատավարձը, աշխատավորներին ապաստակե-
լու համար սանատորիաների, հանգստյան տների, ակումբների լայն ցանց
տրամադրելով» (119-րդ հոդվածը):

Մեր յերկրում աշխատանքային որն աշխարհում ամենակարճն է: Աշխա-
տանքային որվ միջին տեվալարյունը մեծահասակների համար խոշոր արդյու-
նաբերության մեջ նախահեղափոխական Ռուսաստանում և այժմ ԽՍՀՄ-ում
(ժամերով):

	Մինչև հեղափոխու- թյունը (1913 թ.)	ԽՍՀՄ-ում (1914 թ. սկզբին)
Ամբողջ արդյունաբերությունը	9,92	6,99
Այս թվում՝		
Քարածխի	10,07	6,90
Մե մետաղների մետալուրգիա	10,07	6,99

Մինչև հեղափոխու- խՍՀՄ-ում (1914 թ-
թյունը (1913 թ.) սկզբին)

Մեքենաշինություն և
մետաղամշակություն
Բամբակեղենի

9,73 7,00
9,39 7,00

Տարեցտարի աճում և հանգստյան տների, կուրորտների յեվ սանատորիա-
ների ցանցը:

Սոցիալական ապահովության միջոցների հաշվին աշխատավորներն սպա-
սարկված են.

1928 թ. 1935 թ. 1936 թ.
(պլանը)

Հանգստյան տներում 437000 1614000 1668000
Կուրորտներում և սանատորիաներում 296000 579000 603000

Արագորեն աճում և ակումբային հիմնարկների յեվ խրհիթ-ընթերցարաննե-
րի ցանցը ԽՍՀՄ-ում.

Տարիներ	Ընդամենն ակումբային հիմնարկներ*	Այդ թվում խրհիթ- ընթերցարաններ
1928—29	27795	21316
1935	46235	33963
1936 (պլանը)	54206	40876

Կինոսարքավորումների, կուլտուրական հանդիսարանի և հանգստի այդ
առավել մասսայական տեսակի ընդհանուր քանակն աճում և այսպես.

Տարիներ	Ընդամենը	Այդ թվում հնչուն
1928	9756	չկային
1935	34990	2285
1936 (պլանը)	43700	11000

* * *

«ԽՍՀՄ-ի ֆաղափացիները նյութական ապահովության իրավունք ունեն
ծերություն, ինչպես նախ յեվ հիվանդության յեվ աշխատունակությունը կորց-
նելու դեպքում:

Այդ իրավունքն ապահովվում է բանվորների ու ծառայողների՝ պետու-
թյան հաշվին կատարվող սոցիալական ապահովագրության լայն ծավալմամբ,
ձրի բժշկական ոգևություն, աշխատավորների ոգտագործման համար կու-
րորտների լայն ցանց տրամադրելով» (120-րդ հոդվածը):

Սոցիալական ապահովագրության բյուջեն, վորը ծախսվում է հիվանդներին
և հաշմանդամների ապահովման համար, մայրություն ապահովման համար,
բժշկական ոգնություն և աշխատավորների բնակարանային ու կենցաղային

* Առանց կուլտուրային ակումբների:

ապամանների բարելավման համար, տարեցտարի աճում և հսկայական չափերով.

1928 թվին —1,0 միլիարդ ուրլի
1934 » — 5,9 » »
1935 » — 6,7 » »
1936 » (պլանը) — 8,0 » »

Հիվանդամոցային մահակալների թիվն ավելանում է հետևյալ կերպ.

1913 թվին —177 հազար
1928 » —247 »
1934 » —478 »
1935 » —525 »
1936 » (պլանը) —561 »

Բժիշկների թիվը 1913 թվի համեմատությամբ ավելացել է համարյա հինգ
անգամ. Ըստ տարիների այդ աճումը կատարվել է այս կերպ.

1913 թվին —19,8 հազար հոգի
1928 » —63,2 » »
1934 » —85,9 » »
1935 » —89,7 » »
1936 » (պլանը) —96,9 » »

Բանվորների (բացի գյուղատնտեսության մեջ զբաղվածներին) կուլտուր-
կենցաղային ապահովման հիմնական ծախսերը ընտելագրվում են հետևյալ
տվյալներով (միլիոն ուրլիներով).

	1928	1932	1934	1935	1936 (պլանը)
Կենսաթոշակներ և նպատներ սոցիալական ապահովագրության գծով	395,1	882,1	1960,8	2518,1	2611,0
Պրոֆմիլությունների նպատներ	17,4	26,0	37,9	72,7	78,7
Թոշակներ	34,5	508,2	1059,0	1421,5	1588,6
Հուսովորություն և կուլտուրա- կան ապասարկում	216,7	1885,1	3314,6	3943,5	5075,8
Առողջապահություն	234,8	1033,0	2832,4	4016,4	5213,8
Գումարը	898,5	4334,4	9204,7	11972,2	14567,9

* * *

«ԽՍՀՄ-ի ֆաղափացիներն ունեն կրթության իրավունք:

Այդ իրավունքն ապահովվում է ընդհանուր - պարտադիր տարրական
կրթությամբ, ձրի կրթությամբ՝ ներառյալ բարձրագույն կրթությունը,
բարձրագույն դպրոցում սովորողների մեծոգ մեծամասնությանը տրվող պե-
տական բաշակների սիստեմով, դպրոցներում մայրենի լեզվով ուսուցանելով,
գործարաններում, խորհունտեսություններում, մեքենատրակտորային կայան-
ներում ու կուլտուրային կենտրոններում աշխատավորների համար ձրի արտադրա-

կան, տեխնիկական ու ագրոնոմիական ուսուցում կազմակերպելով»
(121-րդ հոդվածը):

Լուսավորության ասպարեզում մեր ձեռք բերած մեծագույն հաջողու-
թյունները յերևում են հետևյալ թվերից:

	1914թ.	1925 թ.	1928 թ.	1935 թ.	1936 թ.
Սովորողների թիվը տարրական և միջնակարգ դպրոցներում (հազարներով)	7800	9140	12075	25515	27936
8—11 տարեկան յերեխաների ընդգրկումը տարրական դպրոցում (տոկոսներով)	—	—	51,4	լրակատար ընդգրկում	
Սովորողների թիվը ԲՈՒՀ-երում և ԲՏՈՒՀ-երում (հազարներով)	125	—	160	510	528

Բնակչության միջից հիմնականում վերացված է անգրագիտությունը:

Անգրագիտության վերացման և կիսագրագիտության դպրոցներում սովորել են:

1924 թվից մինչև 1935 թիվը — 70.190 հազար հոգի
1936 թ. (պլանը) — 9500 » »

Մասսայական արտադրական ուսուցման զարգացումը բնութագրվում է հետևյալ տվյալներով (հազար հոգիներով)

	1935 թ.	1936 թ. (պլանը)
Մասսայական կադրերի նախադարձային առանց արտադրությունից կտրվելու	5461	7347
Այդ թվում տեխնիկականի դժով (արդյունաբերության և յերկաթուղային տրանսպորտ)	1888,2	2879

Սովորող մասսայական կադրերի ընդհանուր թվի մեջ մենք ունենք (հազար հոգիներով):

	1935թ.	1936թ. (պլանը)
Տրակտորիստներ	321	350
Կոմբայնավարներ	34	65
Կոմբայնավարի ոգնականներ	18,7	35
Մեխանիկներ	8,6	13

Աշխատավորների ունեցած նյութական միջոցները (տպարաններ, շենքեր, թուղթ և այլն) ապահովում են տպագրական գործի բուռն ծաղկումը:

Թերթերի տիրաժների ամուրը յերևում է հետևյալ թվերից:

1913 թ. 1929 թ. 1934 թ. 1935 թ. 1936 թ. (պլանը)

Թերթերի միտրյա տիրածը (միլիոն որինակ)	2,7	12,5	36,0	37,0	39,0
---------------------------------------	-----	------	------	------	------

* * *

«Կնոջը ԽՍՀՄ-ում տղամարդուն համահավասար իրավունքներ են տրվում տնտեսական, պետական, կուլտուրական ու հասարակական-քաղաքական կյանքի բոլոր բնագավառներում:

Կանանց այդ իրավունքների իրականացման հնարավորությունն ապահովվում է կնոջը տղամարդուն հավասար իրավունք տալով աշխատանքի, աշխատանքի վարձատրության, հանգստի, սոցիալական ապահովագրության ու կրթության ասպարեզում, մեր ու մանկան շահերի պետական պահպանության, կնոջը հղիության ժամանակ արձակուրդ տալով՝ պահպանելով աշխատավարձը, ծննդատների, մանկամուտքների ու մանկապարտեզների լայն ցանցով» (122-րդ հոդվածը):

Խորհրդային կինը մեծ տեղ է գրավում արտադրության մեջ: Ամբողջ արդյունաբերության մեջ կին-բանվորուհիների տեսակարար կշիռն աճում է այսպես (տոկոսներով):

1/I 1924 թ.	27,7
1/I 1934 թ.	35,8
1/V II 1935 թ.	39,5

Կանանց տեսակարար կշիռը (տոկոսներով առ յերկու սեռի բանվորները թիվը) խոշոր արդյունաբերության նյութերում:

Տարեներ	Մեքենայի-նության	Մնուսնդհամի	Տեքստիլ և կարի	Բամբակեղենի և պոլիգրաֆ արտադր.
1913	4,2	22,0	55,7	24,0
1928	8,9	26,4	61,2	24,6
1932	20,7	33,3	69,1	41,2
1935	25,8	44,9	72,3	49,5

Կուլտուրային կարգը կին-կուլտուրասուսուսն պատվավոր տեղ ապահովեց կուլտուրային արտադրության մեջ և անտեսական լրակատար անկախություն՝ ընտանիքում: 1935 թվին վաստակած աշխուրթի ընդհանուր թվից կուլտուրասուսուսները բաժինը կազմել է:

	Տոկոսներով
Լենինգրադի մարզում	40,3
Արևմտյան »	46,3
Մոսկվայի »	41,7
Սվերդլովի »	36,1
Բել. ԽՍՀ »	34,6
Ուզբեկ. ԽՍՀ »	23,3
Թուրքմեն. ԽՍՀ »	26,7

Մեծ չափով աճել է խորհրդային կանանց ակտիվ մասնակցությունը պետական յեվ հասարակական-քաղաքական կյանքում:

Ընտրություններին ներկայացող ընտրողների թիվը
(սովորական)

Քաղաքային խորհուրդն. Գյուղական խորհուրդն.

Տարիներ	Կանայք	Տղամարդիկ	Կանայք	Տղամարդիկ
1926	42,9	60,0	28,0	68,5
1934	90,4	92,0	80,3	86,4

Կանայք ԽՍՀ Միության խորհուրդների կազմում (սովորական) առ անդամների ամբողջ թիվը).

Տարիներ Գյուղխորհուրդներում Քաղխորհուրդներում

1926	9,9	18,2
1934	26,2	30,4

Սոցիալիստական շինարարության բոլոր ճակատներում կատարվող մարտական աշխատանքում կանայք ուսուցիչներ ընթացում աղամարդկանց հետ համառոտություն, խիզախություն և հերոսություն հանդես բերելով: Արդեն մինչ 1936 թվի փետրվարի սկիզբը ԽՍՀ Միության Եփեմյաններով պարգևատրված են 432 կին, այդ թվում

Արտադրական նվաճումները համար արդյունաբերության և շինարարության մեջ	103
Գյուղատնտեսության մեջ	222
Անձնական արիություն և խիզախություն ցուցաբերելու համար	22

Խորհրդային իշխանությունը կանանց բոլոր հնարավորությունները տալիս է սովորելու բոլոր ուսումնական հիմնարկներում: Ահա թե ինչպես է աճում սովորող կանանց թիվը.

Տարիներ	Բուհերում		Տեխնիկումներում		Բանֆակներում	
	Հազար հոգի	Տղամարդիկ և կանայք	Հազար հոգի	Տղամարդիկ և կանայք	Հազար հոգի	Տղամարդիկ և կանայք
1928	48	28,1	73	37,6	7,7	15,6
1935	177	38,0	280	44,1	98,0	36,6

ԽՍՀՄ-ում և կապիտալիստական յերկրներում բուհերում սովորողների մեջ կանանց աստիճանը բերվող համեմատությունը ցույց է տալիս, Վերաբարտասանվում կինը գլխավորապես պատրաստվում է առաջին անասունների դասնալու.

Ընդհանուր
թիվը
միջինը

ԽՍՀՄ (1/1 1935 թ.)	38,0	23,3
Գերմանիա (1934—1935 թ.)	13,6	3,5
Իտալիա (1934—1935 թ.)	14,0	1,1
Անգլիա (1932—1933 թ.)	25,7	2,0

Խորհրդային իշխանությունը հսկայական ոգնություն է ցույց տալիս աշխատավոր մորը՝ յերեխաներին դաստիարակելու գործում, ազատելով նրան հոգսերից: Արագ տեմպով աճում է ԽՍՀՄ-ի մշտական յիվ սեզոնային մանկատարների թիվը.

Տարիներ	Ընդամենը ԽՍՀՄ-ում
1913	11,000
1928	257,000
1935	5632000
1936 (պլանը)	6426000

1939 թ. հունվարին, համաձայն ԽՍՀՄ Կենտրոնական և Ժողովուրդների 1936 թվի հունիսի 27-ի Վարդան արգելելու, ծննդկաններին ցույց տրվող նյութական ուժանդակությունն ավելացնելու, բազմամյա ընտանիքներին պետական ոգնություն սահմանելու, ծննդարանների, մանկամսուրների և մանկապարտեզների ցանցն ընդարձակելու, ավիանո շվճարելու համար ջրեական պատիժն ուժեղացնելու և ապահարզանի որոնողությունների մեջ մի քանի փոփոխություններ մտցնելու մասին՝ վորոշման, մսուրների տեղերը կլրկնապատկեն և քաղաքներում կհասցվեն 800 հազարի, գյուղական վայրերում մսուրների տեղերը մշտական մսուրներում կաճեն 500 հազարով, իսկ սեզոնայիններում՝ 4 միլիոնով: Մանկամսուրների տեղերի ընդհանուր թիվը քաղաքներում և գյուղերում կհասնի ավելի քան 11 միլիոնի:

Աշխատավորների միլիոնավոր յերեխաներ դաստիարակվում են մանկապարտեզներում: Ահա թիվերը.

Տարիներ	Հազար հոգի
1927—1928	— 104
1935	— 1371
1936 (պլանը)	— 1709

Համաձայն ԽՍՀՄ Կենտրոնական և Ժողովուրդների այդ նույն վորոշման 1939 թվի հունվարի 1-ին յերեխաների տեղերի թիվը մանկապարտեզներում կհասցվի մինչև 3,5 միլիոնի:

Ց Ա Ն Կ

	Ծր
Ազիատորի խնդիրները ԽՍՀՄ նոր Սահմանադրության նախագծի համա- ժողովրդական քննարկման առնչությամբ	3
Գ. Մխալյով Պորհրդային Սահմանադրության զարգացման ետապները (պատմական տե- ղեկանք)	19
Մ. Յու. Դրիվ Ֆապիտալիստական յերկիրների սահմանադրությունները	29
Այն, ինչը կա, ինչն արդեն նվաճված է (թվեր և փաստեր նոր Սահմա- նադրության իրագործման նյութական հիմունքների մասին)	56

Հայերեն քարգմանեցին Մ. Զախարյան, Հ. Թուրչյան յեւլ Հ. Գրիգորյան
Թարգմանությունը խմբագրեց Գ. Հարությունյան
Տեխն. խմբ. Ա. Խաչատրյան, Սրբ. Լ. Արովյան

Գլավլիտի լիազոր C-1082, հրատ. № 386,

Պատվեր № 251, տիրած 4.000, ինդեքս $\frac{\text{II-85}}{\text{III}}$

Հանձնված է արտադրության 20/VII 1936 թ.
Ստորագրված է տպագրության 7/VIII 1936 թ.

Գինը 60 կ.

Հայկուսեոսի տպարան, Յերեվան, Ալլախվերդյան № 27

50

ՀՀ Ազգային գրադարան



NL0936613

15 АВГ. 1936 572

ԳԻՆԸ 60 Կ.

11
28202



В ПОМОЩЬ АГИТАТОРУ
АРМПАРТИЗДАТ, Эривань